

Հանրային դիսկուրսի անվտանգայնացում և ապաանվտանգայնացում. ԵՏՄ-ից մինչև Ապրիլյան պատերազմ

Սու Ավետիսյան

Ներածություն

2013 թ. սեպտեմբերի 3-ին նախագահի մեկ հայտարարությամբ Հայաստանը դադարեց ԵՄ Ասոցացման համաձայնագրի ստորագրման գործընթացը՝ փոխելով վեկտորը դեպի Եվրասիական տիրույթ: 2016 թվականի քառօրյա պատերազմի ժամանակ, անկախ այն հանգամանքից, որ Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանը զենք էր մատակարարում հակառակորդ Ադրբեջանին, Հայաստանը դուրս չեկավ ո՛չ Եվրասիական տնտեսական միությունից, ո՛չ էլ ՀԱՊԿ-ից՝ չնայած հանրային լուրջ դժգոհությանը:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վեր հանել հանրային կարծիքի վրա ազդող ռուսաստանյան և հայաստանյան քարոզչության մասշտաբները, դրանց տարածման ուղիները և փոխառանջությունները: Հետազոտությունն ուսումնասիրում է 2013 թվականին Հայաստանի՝ Մաքսային Միությանը (ապա՝ Եվրասիական տնտեսական միությանը) միանալու որոշմանը նախորդող և հաջորդող քարոզչական գործողությունները և Ապրիլյան պատերազմին անիմջապես հաջորդող իրադարձությունները:

Հետազոտությունը հիմնական նպատակն է աջակցելու հանրային վերահսկողության կարողությունների զարգացմանը արտաքին քաղաքականության և անվտանգության ոլորտներում: Հետազոտության գործառնական նպատակը հանրային իրազեկումն է և այլընտրանքային դիսկուրսին ստեղծումը, որը թույլ կտա արտաքին քաղաքականության որոշումների վրա հանրության կողմից ավելի ծանրակշիռ ազդեցություն ստեղծել: Նախկին Սահմանադրությամբ արտաքին քաղաքականության և անտվանգության հարցերը նախագահի լիազորությունների շրջանակներում էին (<< Սահմանադրություն 2015), իսկ նոր սահմանադրությամբ այս լիազորությունները կփոխանցվեն վարչապետին, բայց նաև կավելանան Ազգային ժողովի իրավասությունները այս ոլորտում: Ինստիտուցիոնալ տեսանկյունից սույն աշխատությունը թույլ կտա որոշումների նկատմամբ հանրային վերահսկողության բարելավման նոր ուղիներ մշակել, այդ թվում՝ այլընտրանքային միջոցներ, որոնք կհակակշռեն լայնամասշտաբ պրոպագանդային: Այս առումով՝ հանրային վերահսկողության մեծացումը կարևորվում է հատկապես ոչ ժողովրդավարական երկրներում, քանի որ այն հանգեցնում է

որոշումների կայացման գործընթացում թափանցիկության և հաշվետվողականության մեծացմանը՝ միաժամանակ խթանելով նաև ժողովրդավարական անցումը:

Գրականության տեսություն

Սույն հետազոտությունն ունի թե՛ տեսական, թե՛ կիրառական կարևորություն: Ցայսօր Հայաստանի՝ Մաքսային միությանը (հետագայում՝ Եվրասիական Տնտեսական Միություն (ԵՏՄ)) անդամակցության վերաբերյալ կան սակավաթիվ հետազոտություններ, և միայն վերջերս են այս ուղղությամբ մի քանի կարևոր աշխատանքներ իրականացվել (Ademmer, Delcour, and Wolczuk 2017; Ter-Matevosyan et al 2017): Սակայն իրականացված հետազոտությունների կոնցեպտուալ առանցքը և նպատակները տարբերվում են սույն աշխատության առաջ քաշած խնդիրներից:

Տեր-Մաթևոսյանը և այլք (2017) կարևոր աշխատանք են կատարել, որը դիտարկում է Հայաստանի՝ ՄՄ-ին (այնուհետև ԵՏՄ-ին) միանալու գործընթացի պատճառները: Այս աշխատանքը ոչ միայն ի հայտ է բերում Հայաստանի քաղաքական էլիտայի հաշվարկները և պատճառաբանությունները ՄՄ-ին միանալու վերաբերյալ, այլև ինչ-որ չափով ցուցադրում, թե ինչպես է ինտեգրման որոշումը «անվտանգայնացվել» (securitize)՝ այն բացատրելով Բարի Բուզիանի, Օլիվեր Վեյվերի և Յապ դե Վիլդեյի (Buzan, Waever Ole 1998) տեսությամբ: Սույն հետազոտությունը հիմնվում է Կոպենհագենի դպրոցի առաջ քաշած տեսական շրջանակից, սակայն ի տարբերություն վերոնշյալ հեղինակների՝ «անվտանգայնացման» հարցը չի սահմանափակվում միայն ՄՄ մտնելու որոշմամբ, այլև դիտարկում է ապրիլյան պատերազմի հետ շղթայական կապի մեջ: Այս մոտեցումը արդարացվում է Մայքլ Ֆեյրլոուի (Fairclough 1989), իսկ ավելի ուշ Պիեռ Բորբյույի (Bourbeau 2014) բացատրությամբ, որտեղ հեղինակները պնդում են, որ «անվտանգայնացման» դիտարկումը պետք է ներառի թե՛ համատեքստը, թե՛ շարունակականությունը:

Նախևառաջ հարկավոր է մեկնաբանել «անվտանգայնացումը» և «ապաստանվտանգայնացումը»՝ որպես հետազոտության առանցքային կատեգորիաներ, երկրորդ՝ հասկանալ, թե որոնք են Հայաստանի և Ռուսաստանի հանրային կարծիքի վրա ազդող ուղիները նշված ժամանակահատվածներում, ապա անհրաժեշտ է այս երկուսը համադրելու միջոցով դուրս բերել համապատասխան տեսական մոդել:

Բարի Բուզիանի, Օլիվեր Վեյվերի և Յապ դե Վիլդեյի (1998) աշխատությունը անկյունաքարային է «անվտանգայնացման» տեսության զարգացման համար: Համաձայն այս տեսության՝ անվտանգայնացումը (securitization), «քաղաքական դեկլարության միտումնավոր լեզվաբանական գործողություն է, որի նպատակն է այլապես սովորական քաղաքական որոշումը տեղափոխել պետական որոշումների բացարձակ դաշտ՝ բացառելով որևէ հանրային միջամտություն» (1998: 22-24): Նրանց

կոնցեպտը առաջարկում է «Ելույթային գործողության¹» (*speech act*) տեսական կադապար, որը ներառում է երեք կատեգորիա: Առաջինը՝ անվտանգայնացվող օբյեկտն է (*referent object*), այսինքն՝ այն երևույթը, որին հղում է կատարում «Ելույթային գործողություն»-ը, որի նկատմամբ հատուկ գործողության իրականացումը լեգիտիմացվում է անվտանգության անհրաժեշտությունից: Որպես կանոն՝ հիմնականում պետություններն են դառնում անվտանգայնացվող օբյեկտներ, սակայն նույն կերպ կարող են անվտանգայնացվել այլ օբյեկտներ ևս: Երկրորդ կատեգորիան *անվտանգայնացնող գործիչներն* են (*securitizing actors*), որոնք ունեն իրավասություն հայտարարելու անվտանգայնացում անվտանգայնացվող օբյեկտի նկատմամբ: Որպես կանոն՝ սրանք պետական իշխանության մարմիններն են: Երրորդ կատեգորիան՝ *ֆունկցիոնալ գործիչները* (*functional actors*), նույնպես հանդես է գալիս անվտանգայնացնող օբյեկտների անունից, սակայն ֆորմալ այդպիսի իրավասություն չունի: Այս կատեգորիային են պատկանում հանրային կարծիքի վրա ազդող խմբերը, օրինակ՝ փորձագետները, լրագրողները և այլք: Հեղինակները խոսում են ապաստանվտանգայնացման (*desecuritization*) մասին այն պարագայում, երբ անվտանգայնացված խնդիրը վերադարձվում է «սովորական» քաղաքականության դաշտ (1998: 29):

Անվտանգայնացման տեսությունում խոսվում է նաև «հանրային դիմադրողականության» (*resilience*) մասին, երբ հասարակությունը չի համաձայնվում առաջադրված իշխանական թեզին և փորձում է բացահայտել անվտանգանացման իրական նպատակը: Այս խնդրին առնչվող հետազոտությունները սակավ են, քանզի այս ուղղությունը նոր է զարգանում (Bourbeau and Vuori 2015): Բորբյուն և Վուարին (2015), բարելավելով Կոպենհագենի դպրոցի (1998) մոդելը, անվտանգայնացման և ապաստանվտանգայնացման դիադիկ մոտեցմանը հավելել են «հանրային դիմադրողականության» տարր: Սա թույլ է տալիս չդիտարկել անվտանգայնացումը և ապաստանվտանգայնացումը՝ որպես իշխանությունից հերմետիկ կերպով ուղղորդվող գործընթացներ, այլ դրանք դիտարկել «հանրային դիմադրողականության» համատեքստում: Մինչ այս մոդելի կիրառելի կլինի քննարկվող երկու դեպքերի ուսումնասիրության համար, անհրաժեշտ է դիտարկել ևս մի քանի տեսական հարցեր:

Համաձայն Վիլկենսոնի՝ արևմտյան անվտանգայնացման տեսությունը չի կարող կիրառվել այլ համատեքստերում երկու պատճառով: Առաջին՝ կիսաավտորիտար համակարգում այդպիսի գործողությունները տարանջատել «սովորական քաղաքականությունից» դժվար է, և երկրորդ՝ ուշադրության կենտրոնում պահելով «Ելույթային գործողությունները»՝ հավանական է չնկատել այն անվտանգայնացման գործընթացները, որոնք չեն ուղեկցվում պաշտոնական ելույթներով (Wilkinson 2007): Պիեռ Բորբյուն (2014) նույնպես քննադատաում է այս տեսության միակողմանի բնույթը,

¹ «Ելույթային գործողություն» *speech act* (թարգմանված է հեղինակի կողմից բառացիորեն), ենդադրում է խոսքի և գործողության նույնականացում, այսինքն երբ անվտանգության վերաբերյալ հայտարարություն է արվում ապա այն նաև ենթադրում է կոնկրետ գործողությունների շարք:

որը հիմնվում է Կառլ Շմիդտի՝ ինքնիշխանի մասին փիլիսոփայության վրա, մինչդեռ պետք է նաև ներառի Միշել Ֆուկոյի՝ շարունակական անվտանգայնացման մոտեցումը (Bourbeau 2014: 189–196): Նմանատիպ կարծիք ունի նաև Բալզակը, ով պնդում է, թե արդյունավետ անվտանգայնացումը հնարավոր է հատուկ համատեքստի առկայության դեպքում միայն (Balzacq 2011; Balzacq 2005):

Արնրադառնալով Վիլկենսոնի (2007) տեսակետին՝ պետք է նշել, որ այն միայն մասնակիորեն է ընդունելի: Նախ՝ նրա էմպիրիկ տվյալները հիմնվում են միայն դրդական դեպքի քննության վրա այն ժամանակահատվածում, երբ տեղի էր ունենում ավտորիտար համակարգի ամրապնդում, որն ընդհանուր առմամբ ոչ միշտ է բնութագրական եղել այդ երկրի համար: Երկրորդ՝ համաձայնելով Պիեռ Բորբյուի դիտարկմանը, թե «անվտանգայնացման» երկու ձևերն էլ միմյանց չեն բացառում, միայն դիսկուրսիվ մեխանիզմների վրա շեշտը դնելը խնդրահարույց է: Ինչ վերաբերում է Բալզակի (2005, 2011) դիտարկմանը, ապա հստակ սահմանելով դեպքերի ուսումնասիրությունները՝ բավարարվում է հատուկ «համատեքստի» պահանջը, որի պարագայում անվտանգայնացման լսարանը (audiance) աջակցում է գործընթացին: Թե՛ ՄՄ-ին անդամակցելու որոշումը, թե՛ հատկապես Ապրիլյան պատերազմը սովորական քաղաքականությունից դուրս գտնվող կարևորագույն հանգույցներ են (critical junctures) (Capoccia and Kelemen 2007), որը թույլ է տալիս պնդել հատուկ համատեքստի առկայությունը:

Փաստորեն, որոշակի վերապահումներով Կոպենհագենի դպրոցի մոտեցումը հնարավոր է պրոյեկտել նաև հայաստանյան գործընթացների վրա: Այս պարագայում անվտանգայնացնող գործիչները բարձրագույն պետական պաշտոնյաներն են, *անվտանգայնացվող օբյեկտը* Հայաստանի Հանրապետությունն է, *ֆունկցիոնալ գործիչները* սույս աշխատության մեջ սահմանափակվում են փորձագետներով և լրագրողներով: Շատ կարևոր է նաև մատնանշել, որ թեև Լեռնային Ղարաբաղը ֆորմալ առումով ՀՀ-ի մաս չէ, սակայն չլուծված հակամարտությունը մնում է Հայաստանի անվտանգությանը սպառնացող առաջնային խնդիրը: Հետևաբար՝ անվտանգայնացման թե՛ հայկական, թե՛ ռուսական պաշտոնական և վերլուծական կենտրոններում ուղղակի կամ անուղղակի կերպով շեշտվում է այս հանգամանքը:

Ֆունկցիոնալ գործիչների հանգամանքը էական է հետազոտության համար, քանի որ այն թույլ է տալիս ի ցույց դնել այն խմբերին և կազմակերպություններին, որոնք օժանդակում են անվտանգայնացման և ապաանվտանգայնացման գործընթացներին: Կոպենհագենի դպրոցը (1998) չի մանրամասնում ֆունկցիոնալ գործիչների և անվտանգայնացնող գործիչների միջև եղած հարաբերությունները, սակայն հանրային կարծիքի վրա ազդելու մոդելների փորձը ենթադրում է նաև ուղղակի կապեր: Օրինակ՝ ամերիկացի հետազոտող Էնթմանը (2003) առաջարկում է «կասկադային ակտիվացման» (cascading activation) մոդելը, որտեղ նա ցուցադրում է, թե ինչպես են Սպիտակ տան հաղորդագրությունները անմիջապես վերարտադրվում փորձագիտական համայքնի և

մեդիայի կողմից, ինչի արդյունքում բոլոր խաղացողներն էլ իրենց ներդրումն են ունենում անվտանգայնացման հաղորդակցման համար (Entman 2003):

Եթե Հայաստանի պարագայում տեսության տեղայնացումը դժվար չէ, Ռուսաստանի դեպքում դա հնարավոր է միայն որոշակի պայմանների հստակեցման դեպքում: Ռուսաստանի դերը Արևելյան գործընկերության երկրների ինտեգրացիոն գործընթացներն անվտանգայնացնելու մեջ ակնառու է հատկապես 2011 թվականից հետո: Սույն հետազոտության մեջ Ռուսաստանի իշխանությունները դիտարկվում են որպես *անվտանգայնացնող գործիչներ*: *Ֆունկցիոնալ գործիչները* Հայաստանի օրինակի համանմանությամբ փորձագետներն ու լրագրողներն են:

Խնդիր է առաջանում անվտանգայնացվող օբյեկտը սահմանելիս: Ռուսաստանի հարցերով զբաղվող մասնագետների մոտ կա հստակ կոնսենսուս, որ ռուսաստանյան քաղաքական էլիտան դիտարկում է հետխորհրդային տարածքը՝ որպես իր անմիջական և բացարձակ հետաքրքրությունների տարածաշրջան (Laenen 2012): Հետևաբար, կարելի է ենթադրել, որ Հայաստանի ինտեգրացիոն ծրագրերը Եվրամիության (ԵՄ) հետ կարող են հանդիսանալ որպես անվտանգայնացվող օբյեկտ:

Չնայած այն հանգամանքին, որ դարաբաղյան չլուծված հակամարտությունը հանդիսանում է Ռուսաստանի՝ Հայաստանում որոշումների վրա ազդելու հիմնական լծակը, Հայաստանը նաև ունի էներգետիկ, տնտեսական և քաղաքական կախվածություն Ռուսաստանից (Sasse 2013. 572–573): 2006 թվականից Ռուսաստանի կողմից գազային պայմանագրերի գնի վերանայումից հետո Հայաստանը ստիպված էր զիջել Հայաստան–Իրան գազատարի 75% Ռուսաստանին, իսկ ՄՍ մտնելուն զուգահեռ կուտակված գազի պարտքի դիմաց նաև մնացյալ մասնաբաժնից (Ter-Matevosyan et al. 2017: 349): Այսինքն՝ Հայաստանի ինտեգրացիոն ծրագրերի վրա Ռուսաստանի ուղղակի ազդեցության լծակները բազմազան են, և անվտանգայնացման տեսանկյունից պարտադիր չէ միայն հղում կատարել արտաքին մարտահրավերներին:

Հետազոտության նպատակը նաև երկու մակարդակների՝ ռուսաստանյան ու հայաստանյան քարոզչության փոխազդեցության վերհանումն է, հատկապես ռուսական կողմի տեղեկատվական արշավներն ընկալելը: Կոպենհագենի դպրոցի մոդելը թեև մեթոդաբանական առումով պարզորոշ է, սակայն հասկանալի է, որ կապերը վերոնշյալ կատեգորիաների միջև միշտ չէ, որ հետևում են մոդելի խիստ պահաջներին: Հնարավոր է, որ անվտանգայնացման և ապաստանվտանգայնացման դիսկուրսը կարող է առաջ մղվել երկու երկրների *ֆունկցիոնալ գործիչների* կողմից առանց *անվտանգայնացնող գործիչների* լուրջ միջամտության: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ հետազոտությունը կհետևի մոդելին՝ մատնանշելով նաև առկա շեղումները:

Մեթոդաբանություն

Հետազոտության նպատակն է վեր հանել Ռուսաստանի քարոզչական գործողությունները Հայաստանում երկու կարորագույն իրադարձությունների՝ 2013 թվականին ՄՄ-ին անդամակցելու որոշման և 2016 թվականի Ապրիլյան պատերազմի ընթացքում: Հետազոտության մեջ առաջ են քաշվել հետևյալ հարցադրումները:

- Հ. 1. *Ի՞նչ մարտավարություն է ՀՀ իշխանությունն օգտագործում Ռուսաստանի հետ իր դաշինքն արդարացման համար:*
- Հ. 2. *Փափուկ ուժի ի՞նչ միջոցները է կիրառում Ռուսաստանը վերոնշյալ կարևորագույն հանգույցներում որոշումներ կայացնելու ժամանակ:*
- Հ. 3. *Ո՞ր դեպքերում են Հայաստանի և Ռուսաստանի քարոզչական գործողությունները համընկնում կամ տարանջատվում:*

Սույն աշխատությունը որակական հետազոտություն է: Հավաքագրված տվյալների վերլուծությունը կատարվել է երկու մեթոդներով՝ կոնտենտի վերլուծություն և քաղաքական դիսկուրսի վերլուծություն՝ օգտվելով Իգաբել Ֆեյրքլոյի և Նորմա Ֆեյրքլոյի տեսությունից (2012) :

Մինչ մեթոդաբանական հատվածի քննարկումը, շատ կարևոր է նշել այս մոտեցման տրամաբանությունը, քանի որ որպես կանոն կոնտենտ վերլուծությունը չի համադրվում դիսկուրսի վերլուծության հետ: Եթե կոնտենտ վերլուծությունը օնթոլոգիայի տեսանկյունից պատկանում է ռեալիստական դպրոցին և ենթադրում է իրականության օբյեկտիվ գոյություն, ապա դիսկուրսի վերլուծության մեթոդը նախանշում է, թե իրականությունը ստեղծվում է լեզվամտածողության միջոցով, ուստի առավելապես օգտագործվում է կոնստրուկտիվիստական դպրոցի ներկայացուցիչների կողմից: Սակայն այս հարցի թեմատիկ քննարկումը բացահայտել է, որ համատեղելիությունը որոշ դեպքերում հնարավոր է: Ինչպես նշում են Հարլին և Ֆիլիփսը.

«Հնարավորինս ֆորմալ և խիստ կառուցվածքով դիսկուրսի վերլուծությունը համադրելի է կենտենտ վերլուծության մեկնաբանական ձևի հետ: Այս պարագայում հետազոտության նմատակը իրականության ընկալումն է տեքստային մակարդակով, որի պարագայում կոնտենտ վերլուծությունը ցուցադրում է կատարողական կապերը, որը շատ կարևոր է նպատակ է դիսկուրսի վերլուծության համար» (2004: 20–21):

Ֆեյրքլոյի և Ֆեյքլոյի (2012) տեսական կաղապարը քաղաքական դիսկուրսի վերլուծության հետ համատեղելի է, քանի որ այն համադրելի է Կոպենհագենի դպրոցի առաջարկած տեսության հետ. այն հաշվի է առնում թե՛ համատեքստի կարևորությունը, թե՛ արգումենտացիայի ընդունելիությունը (Fairclough and Fairclough 2012:75–77): Այս տեսության միջոցով կվերլուծվեն անվտանգայնացնող գործիչների պաշտոնական ելույթները, իսկ կոնտենտ վերլուծությունը թույլ կտա դիտարկել կատարողական

կապերը: Հետազոտության համար հավաքագրվել են ռուսական և հայկական մամուլի հրապարակամներ, պաշտոնական ելույթների տեքստեր, մամուլում տպագրված փորձագիտական վերլուծություններ, և 8 փորձագետների հետ անցկացվել են հարցազրույցներ :

Պաշտոնական ելույթները ենթարկվել են դիսկուրսի վերլուծության: Փորձագիտական հրապարակումները, հարցազրույցները և մամուլի հրապարակումները ենթարկվել են կոնտենտ վերլուծության՝ օգտագործելով ստորև գետեղված բառային կատեգորիաների և կոդերը:

Փորձագետների ընտրության տրամաբանությունը հիմնված է նրանց՝ հանրային կարծիքի ձևավորման վրա ունեցած ազդեցության վրա: Բացի այդ՝ հնարավորինս պահպանվել է տեսակետների բազմազանությունը: Կովկասի և մասնավորապես Հայաստանի հարցերով զբաղվող «ուղեղային կենտրոնները» սակավաթիվ են: Ամենանշանակալի կառույցներից կարելի է առանձնացնել Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը և «Գորչակովի հիմնադրամը», ԱՊՀ երկրների ինստիտուտը, որը ղեկավարում է Կոնստանտին Ջատուլինի կողմից, ով ՌԴ պետդոմայի պատգամավոր է, ԱՊՀ երկրների հարցերով հանձնաժողովի անդամ: Բոլոր հիմնական փորձագետների հրապարակումները ուսումնասիրվել են՝ օգտագործելով բանալի բառեր՝ առանց ժամանակային սահմանափակումների, քանի որ չնայած այն բանի, որ հետազոտությունը ուսումնասիրում է կարևորագույն հանգույցները, Եվրոպական Միության հետ Ասոցացման համաձայնագրի մասին բանակցությունները սկսվել էին ավելի վաղ:

Մամուլի տպագիր հրապարակումները Ռուսաստանի պարագայում հավաքագրվել են East View համակարգի միջոցով: ՄՄ-ն միանալու որոշման պարագայում դիտարկվել է ամբողջ 2013 թիվը, իսկ Ապրիլյան պատերազմի դեպքում, հաշվի առնելով երևույթի անկախատեսելիությունը, 2013 թվականի ապրիլի 2-ից մինչև տարեվերջ: Արդյունքում ուսումնասիրվել է ռուսական մամուլում տպագրված 90 հոդված:

Հայաստանյան տպագիր մամուլի պարագայում նման հնարավորության բացակայության պատճառով ընտրվել են հայաստանյան չորս օրաթերթեր՝ հետևելով նպատակային խմբան (purposive sample) մեթոդին՝ «Հայաստանի Հանրապետություն», «Հայկական ժամանակ», «Առավոտ» և «Իրավունք»: Ընտրանքի տրամաբանությունը հետվյալն է. առաջինը՝ որպես պետական տեսակետ արտահայտող, երկրորդը՝ ընդդիմադիր տեսակետ, երրորդը, նախնական ուսումնասիրության համաձայն, բաց է արևմտամետ դիսկուրսի համար, իսկ չորրորդը ռուսամետ է: Ընդհանուր առմամբ՝ դիտարկվել է 200 հոդված: Ի լրումն՝ Nexis Lexis համակարգի միջոցով նույն ժամանակամիջոցի համար դուրս է բերվել Հայաստանի և Ռուսաստանի պաշտոնական լրատվությունը՝ համապատասխանաբար «Արմենպրես» և «Ռիա Նովոստի» աղբյուրներից, ընդհանուր առմամբ՝ 150 հոդված:

Կոնտենտ վերլուծության համար օգտագործվել են հետևյալ կատեգորիաները.

Անվտանգայնացնող գործիչներ, որի պարագայում դիտարկվել են ՀՀ պետական գործիչները, ՀՀ ռազմական գործիչները, ՌԴ պետական գործիչները, ՌԴ ռազմական գործիչները:

Անվտանգայնացվող օբյեկտները, որի պարագայում դիտարկվել են հետևյալ կողերը. անվտանգություն/ կայունություն/ անվտանգության երաշխավոր; ռազմական կախվածություն/ Արցախ/Լեռնային Ղարաբաղ/ պատերազմական վիճակ Ադրբեջանի հետ/ ՀԱՊԿ/ ստրատեգիական գործընկեր/ ռուսական ռազմաբազա/ հայ-թուրքական սահման; ԵԱՀԿ Մինսկի խումբ; տնտեսական կախվածություն/ էներգետիկա/ գազ/ ՄՄ/ ԵՏՄ/ Ռուսաստանից եկող տրանսֆերներ; Ռուսաստանի հայկական համայնք:

Հաղորդակցության խողովակներ/ ֆունկցիոնալ գործիչները, որի պարագայում դիտարկվել են հետևյալ կողերը. փորձագետներ/ քաղաքական վերլուծաբաններ/ լրագրողներ; հայաստանյան բիզնես ներկայացուցիչներ/ Ռուսաստանի հայ գործարարներ:

Պրոպագանդայի թիրախներ, որի պարագայում դիտարկվել են հետևյալ կողերը. Հայաստանի ազգաբնակչություն/ Արցախի/ Լեռնային Ղարաբաղի բնակչություն; Հայաստանյան բիզնես ներկայացուցիչներ/ Ռուսաստանում հայ գործարարներ; Հայաստանի իշխանություն/ Հայաստանում գործող քաղաքական ուժեր; օտարերկրա պաշտոնական ներկայացուցիչներ:

Հայաստանի և Ռուսաստանի իշխանությունների համագործակցված/ տարանջատված քարոզ, որի դեպքում դիտարկվել են հետևյալ կողերը. ընդհանուր քաղաքական շահ/ ընդհանուր տնտեսական շահ; տարանջատվող շահ/ ՌԴ իշխանություններին հասցեագրված պահաջներ/ Ռուսաստանի ռազմական աջակցություն Ադրբեջանին:

Եվրոպական Միության Ասոցացման համաձայնագրից մինչև Մաքսային Միություն

Հայաստանի բանակցությունները Եվրոպական Միության հետ Ասոցացման համաձայնագրի շուրջ մեկնարկել էր 2010 հուլիսին, իսկ 2012 թվականի հունիսից՝ Խորը և Համապարփակ առևտրի գոտու ստեղծման շուրջ: Ըստ Տեր-Մաթևոսյանի և այլոց (2017)՝ սկզբնական շրջանում Ռուսաստանից Հայաստանի հեռացումը և Եվրոպական Միության հետ հարաբերությունների խորացումը Ռուսաստանի կողմից չէր դիտարկվում «խանդով»: 2012 թվականին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը այս կապացությամբ հայտարարում է, որ «*Ռուսաստանը չի պատրաստվում շտապել կամ*

ստիպել որևէ մեկին միանալու ԵՏՄ-ին: Այդ որոշումը պետք է լինի ինքնիշխան որոշում՝ համաձայն պետության երկարաժամկետ շահերի» (Ter-Matevosyan et al 2017: 341):

Սակայն այս բավականին զսպված հայտարարությունը պետք է դիտարկել նաև այն համատեքստում, որ 2012 թվականին Պուտինի վերընտրությունից հետո Ռուսաստանում լայնամաշտաբ ցույցեր տեղի ունեցան «Բոլոտնոյի» հրապարակում: Համաձայն Կոեսելի և Բունսի (2012)՝ այդ իրադարձությունները բավականին լուրջ ազդեցություն էին թողել Պուտինի՝ ներքին մարտահրավերների նկատմամբ ունեցած կանխատեսումների վրա (Koesel and Bunce 2012): Մյուս կարևոր հանգամանքն այն է, որ նույնիսկ այս ելույթում Վ. Պուտինը քննադատում է միջազգային անվտանգային իրավիճակը և որպես լուծում տեսնում է բազմաբևեռ աշխարհի կայացումը և այդ բևեռներում ինտեգրացիոն ծրագրերի կայացումից հետո բևեռների միջև երկխոսությունը (Путин 2012): Այս թեզը վերահաստատում է բազմաթիվ վերլուծաբանների նշած հանգամանքը, որ Պուտինը «Եվրասիական» տարածաշրջանը դիտարկում է Ռուսաստանի բացառիկ շահերի գոտի:

Դեռևս 2009 թվականին Սերգեյ Մարկեդոնովը Պրահայում սկսած գործընթացի վերաբերյալ իր վերլուծական հոդվածում նշում է, թե Արևելյան գործընկերությունը միտված է Ռուսաստանի՝ հետխորհրդային տարածքում ունեցած ազդեցության նվազեցմանը: Ըստ նրա՝ «գործընկեր» երկրներում պատկերացնում են ինտեգրացիան «սովետական» մտածողության շրջանակներում, այսինքն՝ շատ արագ: Նրա հղում է կատարում Կրաստանի արևմտամետ կուրսին ու օգոստոսյան պատերազմում արևմտյան աջակցության բացակայությանը (Маркедонов 2009): Սակայն ռուսական փորձագիտական շրջանակներում Հայաստանի՝ ԵՄ-ի հետ ինտեգրացիոն ծրագրի վերաբերյալ քննարկումները բավականին խտանում են միայն 2012 թվականին:

Հայաստանի ինտեգրացիոն ծրագիրը անվտանգայնացվեց այն բանից հետո, երբ վարչապետ Տիգրան Սարգսյանը «Կոմերսանտ» թերթում հրապարակված հարցազրույցում նշեց, որ «Հայաստանի համար Մաքսային Միության անդամակցությունը անիմաստ է ընդհանուր սահմաններ չունենալու պատճառով», բայց նաև վերահաստատեց Հայաստանի՝ ԱՊՀ տարածքում տեղի ունեցող գործընթացներին մասնակցելու ցանկությունը (Коммерсант 2012): Հետագայում այս մոտեցումը պետք է կոչվեր «և՛, և՛»: Ռուսաստանյան փորձագետ Մոդեստ Կոլերովը, ով «Ռեքս» և «Ռեզնում» լրատվական գործակալությունների գլխավոր խմբագիրն է, հոդվածով է հանդես գալիս, որտեղ քննադատում է այս մոտեցումը՝ մատնանշելով, որ առանց ընդհանուր սահմանի Հայաստանը առևտուր է իրականացնում ԱՊՀ երկրների հետ, իսկ հետո նշում.

«Ես դիտավորյալ չեմ անրադառնում Հայաստանի աշխարհաքաղաքական սահմանափակումներին, որոնք սահմանափակում են Հայաստանի արտաքին

քաղաքականությունների առաջնայնությունների ընտրությունը... Ռուսաստանը դեռ պահոցում ունի իր ուրույն, չօգտագործված հնարավորությունը Ղարաբաղի ճակատագիրը վճռելու համար, բայց այն կարող է պահանջված չլինել Հայաստանի կողմից» (Колеров 2012):

Ռուսական տպագիր մամուլը հիմնականում սկսեց անրադառանալ Հայաստանի՝ Եվրոպական Ասոցիացիայի համաձայնագրին 2013 թվականի գարնանը: Հավաքագրված հողվածների մարտ-մայիս հատվածի վերլուծությունը վեր է հանում այն հանգամանքը, որ աստիճանաբար վեր էին հանվում գազի/ էներգետիկ անվտանգության խնդիրները, սակայն անմիջականորեն Հայաստանի ԵՄ Ասոցացման համաձայնագրի հետ կապեր առկա չեն: Արդեն հունիսից թե՛ ռուսական տպագիր մամուլը, թե՛ «Ռիա Նովոստի»-ն Հայաստանի՝ ԵՄ Ասոցացման համաձայնագրի վերաբերյալ դիսկուրսը էականորեն անվտայնագցնում են: Օրինակ՝ երբ 2013 թվականի հունիսին հայտնի դարձավ, որ Ռուսաստանը պատրաստվում է մեկ միլիարդ դոլարի զենք վաճառել Ադրբեյջանին (90 հատ T-90 տանկ, 100-ի մոտ հետևակի զրահամեքենա, Սմերչ, Սոլնցեայոկ (ТОС) համակարգ), ռուսական «Արգումենտի Նեդելի»-ն ուղիղ հարցադրում արեց, թե «արդյո՞ք Հայաստանը պատրաստվում է դուրս գալ ՀԱՊԿ-ից» (Аргументы недели 2013):

Հայաստանում խնդրի հնարավոր սրմանը դիմագրավելու համար արդեն 2013 թվականի գարնան վերջից ավելի համակարգային ձևով առաջ էր տարվում «և՛, և՛» բանաձևը: «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնական օրաթերթում տարվա սկզբից հիմնական շեշտը դրվում էր այն հանգամանքի վրա, որ պետք է համադրել Հայաստանի ինտեգրացիոն մարտավարությունները: Հատկանշական է, որ առաջին հողվածը այս ուղղությամբ Հայկ Բաբուխանյանի հետ հարցազրույցն է, ով հայտնի է իր հակաարևմտյան հայացքներով:

«Եվրասիական միության գաղափարի համար ավելի վտանգավոր է ոչ թե Եվրամիության ընդլայնումը, այլ պանթուրքիստական զարգացումները Թուրքիայից, որը վերջերս ստեղծել է Թյուրքական պետությունների պառլամենտական ասոցացիան՝ Թուրքիա, Ադրբեյջան, Ղրղզստան և Ղազախստան» (Բաբուխանյան 2013):

«Առավոտում» տարեսկզբից մինչև հունիս պահպանվում է տեսակետների բազմազանություն, սակայն առկա է նաև հստակ քննադատություն ռուսական քարոզի նկատմամբ: Օրինակ՝ ներկայացվում են Ղավիթ Շահնազարյանի զգուշացումները, թե

փորձ է արվում նույնականացնել ԵՄ Ասոցացման համաձայնագրի և ՆԱՏՕ-ի անդամակցությունը (Շահնազարյան 2013):

Դիտարկված թերթերից միայն «Իրավունք»-ն էր, որ ի սկզբանե զբաղվում էր բացահայտ ռուսամետ քարոզով: Հոդվածների կոնտենտ վերլուծությունը հստակ ցուցադրում է ԵՄ Ասոցացման համաձայնագրի անվտանգանացմանն ուղղված քարոզարշավի առկայությունը: Որպես գերծրնթացի թերացումներ բերվում էին «Հայաստանի մեկուսացման» և «թուրքական վտանգին» դիմակայելու սպառնալիքները: Օրինակ՝ մարտի 11-ի «Կգոյատևի՞ Հայաստանն առանց ռուսական ինտեգրացիոն կառույցների» հոդվածում ներկայացվում է, թե Ասոցացման համաձայնագիրը շահավետ է միայն ԵՄ-ի համար, իսկ ռուսական կառույցների հետ ինտեգրումը իսկապես կապահովի երկրի անվտանգությունը, և Հայաստանը կկապվի Ռուսաստանի հետ արխազական երկաթգծով: «Հայկական ժամանակ»-ի անրադարձը Հայաստանի ինտեգրացիոն ծրագրերին հիմնականում կապված էր ներքաղաքական իրավիճակի հետ, իսկ Սերժ Սարգսյանը թերթում մեղադրվում էր սխալ արտաքին քաղաքականություն վարելու մեջ:

Հունիսից մինչև սեպտեմբերի 3-ի որոշման ժամանակահատվածը բոլոր չորս թերթերում հստակ է անվտանգացման դիսկուրսի տեսանկյունից: Միայն «Առավոտ» օրաթերթում են առկա ռուսական քարոզչության թիրախային մերկացումներ, ավելի քիչ՝ «Հայկական ժամանակ»-ում: Այս սրացումը պատահապան էր, քանի որ Հայաստանի գազի պայմանագրի շուրջ բանակցությունները մտնում էին վերջնական փուլ (պայմանագրով ենթադրվում էր գազի սակագնի բարձացում), իսկ Պուտինի օգոստոսյան այցը Ադրբեյջան բավականին սուր էր ընկալվում Հայաստանում՝ զենքի վաճառքի հանգամանքը հաշվի առնելով: Հունիսին Ռուսաստանի քաղաքական էլիտայի ներկայացուցիչների այցելությունները Հայաստան ակտիվացան, որին թերևս ի պատասխան ԵՄ հանձնակատար Ֆյուլեն հուլիսի 12 այցելեց Հայաստան՝ ևս մեկ անգամ համոզվելու Հայաստանի՝ ստանձնած պայմանավորվածությունները իրականացնելու պատրաստակամությունը: Ավելի վաղ՝ հունիսի 26-ին՝ Լեհաստանի նախագահի հետ հանդիպման ժամանակ, Սերժ Սարգսյանը վերահաստատեց Ասոցացման պայմանագրի ստորագրման մտադրությունը, բայց հստակեցրեց նաև Հայաստանի՝ «և՛-և՛» բանաձևին հետևելը.

«Հայաստանը Եվրամիության Արևելյան գործընկերության շրջանակներում ամենամեծ առաջընթաց ձեռք բերած երկրներից է: Մենք մեր գործունեությունը կառուցում ենք ոչ թե «կամ-կամ», այլ «և-և»-ի սկզբունքի վրա: Եվ ես այստեղ հակասություն չեմ տեսնում» (Azatutyun.am 2013):

Թե՛ այս ելույթից, թե՛ մամուլի որակական վերլուծությունից պարզ է դառնում, որ Հայաստանի ընտրությունը անվտանգայնացվել է Ռուսաստանի կողմից:

Ամռանը արդեն իսկ պաշտոնական լրատվության մեջ ի հայտ են գալիս պայմանագրի ստորագրման հավանականության մասին կանխատեսումներ: Ալեքսանդր Իսկանդարյանը՝ «Կովկաս» ինստիտուտի տնօրենը, ով հատկապես հայտնի է ռուսաստանյան, բայց նաև արևմտյան փորձագետների շրջանում, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթին տված հարցազրույցում նշում է.

«Հայաստանի անտվանգության ապահովման տեսանկյունից Ռուսաստանն անփոխարինելի է հատկապես, երբ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, իսկ Ադրբեյջանը՝ նրա դաշնակիցն է, և առկա է նաև դարաբաղյան հիմնահարցը»: Հայաստանի համար «զինամթերքի և անվտանգության հովանոցի» այլ նմանատիպ աղբյուր տարածաշրջանում, դրանից դուրս գոյություն չունի: Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները վատ ընթացք չունեն, և 50 տոկոսից ավելի հավանական է, որ Վիլնյուսում՝ Արևելյան համագործակցության զագաթնաժողովում, փաստաթուղթը կնախաստորագրվի»
(Իսկանդարյան 2013):

Կարեն Բեքարյանը, ով այդ ժամանակ ՀՀ նախագահի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի խորհրդականն էր, «Հայաստանի Հանրապետության» հետ իր հարցազրույցում զգուշացնում է հակադրման վտանգավորության մասին՝ վերահաստատելով պետական թեզը (Բեքարյան 2013):

Ռուսաստանյան թե՛ տպագիր մամուլը, թե՛ «Ռիա Նովոստի»-ն միայն պաշտոնական տեղեկատվություն էր տրամադրում այդ ընթացքի համար, սակայն անվտանգայնացման դիսկուրսը հաղորդվում էր փորձագետների մակարդակով: Մ.Կոլերովը Հայաստանի «Ազատություն ռադիոկայանին» հուլիսի 12-ին տված հարցազրույցում նշում է.

«Ասոցացման պայմանագրի բանակցությունները սկսելով՝ Հայաստանը արդեն ընտրություն է կատարում՝ սրանով հասկացնելով, որ ՀԱՊԿ անվտանգային փաթեթը նրան այլևս չի բավարում... Ես չեմ զարմանա, եթե Հայաստանում դրվի ռուսական բազայի դուրսբերման խնդիրը»
(Колеров 2013b):

Ռուսական քարոզի մակարդակն ավելանում է, երբ Մերձավոր Արևելքի և Կովկասի հարցերով փորձագետ Ստանլիսլավ Տարասովը Կոլերովի ղեկավարած «Ռեքս» կայքում հրապարակում է իր վերլուծությունը, որտեղ ենթադրում է, թե Հայաստանը ԵՄ Ասոցացման պայմանագրի ստորագրումով քողարկում է «Ղարաբաղը հանձնելու» իր ցանկությունը (Tapacov 2013):

«Առավուտ»-ի հոդվածների որակական վերլուծությունը բացահայտում է, որ ի տարբերություն մյուս թեթերի՝ այն հանդես է գալիս հստակ դիմադրողականության տեսանկյունից: Սա այն է, ինչ Բորբյուն և Վուարին համարում են հանրային դիմադրություն անվտանգայնացմանը, երբ հանրությունը բացահայտում է քարոզի նպատակը և փորձում վերադարձնել դիսկուրսը ռացիոնալության դաշտ (Bourbeau and Vuori 2015): Լրագրող Էմմա Գաբրիելյանը քննադատում է ՀՀ նախկին պաշտպանության նախարար, գեներալ լեյտենանտ Վաղարշակ Հարությունյանի այն պնդումը, թե Հայաստանը Ռուսաստանի կողմից առաջարկված Մաքսային միության հետ ավելի կշահի, քան ԵՄ հետ Ասոցացման համաձայնագիր ստորագրելով, քանի որ ՄՄ-ին անդմակացելը ունի կոնկրետ տնտեսական առավելություններ: Մյուս կողմից լրագրողն անրադառնում է «Ղարաբաղ» կոմիտեյի անդամ Աշոտ Մանուչարյանի տրամաբանությանը՝ հեռու մնալ Արևմտուքից, թե իբրև «երբ ասում են ՆԱՏՕ, ինչպե՞ր LGBT-ի գինված ջոկատն է» (Գաբրիելյան 2013b):

«Իրավունք» թերթի՝ արտաքին քաղաքականության վերաբերյալ բոլոր հոդվածները հուլիսից ինտենսիվ կերպով Մաքսային միության անդամակցելու քարոզ են տանում: ԵՄ Ասոցացման պայմանագիրը համահավասարվում է «պետության կործանմանը» և «Թուրքիայի հետ նույն ինտեգրացիոն ծրագրում» հայտնվելուն (Իրավունք 2013b):

«Հայկական ժամանակի» հոդվածների վերլուծությունը ի ցույց է դնում ռուսական ճնշումները, սակայն հիմնական անրադարձը զարգացումներին տեղի է ունենում Վլադիմիր Պուտինի՝ օգոստոսի 13-ի Բաքու այցից հետո: Արայիկ Հարությունյանը, անրադառնալով Պուտինի այցին, նշում է, որ որպես այդպիսին՝ Հայաստանին որևէ ուղերձ չի ուղարկվել, բայց սպասվելիք Սարգսյան-Պուտին հանդիպման ժամանակ դրանք հավանական են (Հարությունյան 2013):

Վ. Պուտինը Բաքու այցի ընթացքում Հայաստանին ուղերձներ չի հղել, սակայն դիսկուրսի անվտանգայնացման տենդենցները չեն դադարում: Կոպենհագենի դպրոցը (1998) շեշտը դնում է միայն հայտարարվող տեքստերի վրա, որը այս պարագայում չի կարող ցուցադրել անվտանգայնացումը, սակայն եթե անրադառնանք Բորբյունի (2014) քննադատությանը, ապա անվտանգայնացումը կարող է տեղի ունենալ նաև գործողությունների մակարդակով: Պուտինի այցից հետո հայաստանյան թերթերի վերլուծությունը տալիս է հետևյալ պատկեր. «Հայաստանի Հանրապետությունում» հիմնականում շարունակվում է չեզոք դիսկուրսը, և միայն նշվում է արտաքին գործերի փոխնախարար Շավարշ Քոչարյանի՝ օգոստոսի 13-ի հայտարարությունը, որտեղ

վերահաստատվում էր, որ Հայաստանը շարունակելու է իր «և՛-և՛»-ի քաղաքականությունը, և որ Հայաստանը պատրաստվում է նախաստորագրել ԵՄ Ասոցացման համաձայնագիրը (Քոչարյան 2013):

«Առավոտ» օրաթերթում շարունակվում էր հուլիսից սկսած հոդվածների շարքը, որոնք միտված էին շղարշագերծելուն ռուսական փորձագետների անվտանգայնացման փորձերը: Օրինակ՝ Էմմա Գաբրիելյանը մեջբերում է ԱՊՀ երկրների ինստիտուտի տնօրեն և ՌԴ պատգամավոր Կոնստանտին Ջատուլինի անվտանգայնացման փորձը, երբ նա նշում էր, թե «ԵՄ-ն որոշակի դիրքորոշում ունի Ղարաբաղի հարցի շուրջ, և արդյո՞ք որոշակի մերժեցումից Երևանից չի պահանջվի գիջումների գնալ» (Գաբրիելյան 2013a):

Օգոստոսին «Իրավունք» թերթը արդեն հստակ նշում է, որ Հայաստանի՝ ՄՄ-ին միանալը ուղղակի անհրաժեշտություն է, և Պուտինի այցը Բաքու ներկայացվում է որպես «անհաջող սիրավեպ»: «Հայկական ժամանակ»-ի անրադարձը հիմնականում ներկայացնում է ընտրության դժվարությունը, որն առաջացել էր ռուսական ճնշումները մինչև վերջ չհաշվարկելու պատճառով:

Ռուսական տպագիր մամուլում Հայաստանի վերաբերյալ հոդվածները օգոստոսի ընթացքում պահպանում են պաշտոնական լեզուն, սակայն «Նոյան Տապան» լրատվականում սկսվում է նշմարվել Մաքսային միության մեջ մտնելու վերաբերյալ հոդվածների շարք, որոնցում նշվում է Հայաստանի արդյունաբերության հնարավորությունների մասին, և անվտանգայնացվում է ԵՄ-ի հետ Ասոցացման պայմանագիրը (Манучарян 2013; Сафарян 2013): Հատկանշակն է ռուս փորձագետ Սերգեյ Մարկեդոնովի հարցազրույցը Պուտինի՝ Բաքու այցից հետո: Բավականին բավանսավորված կերպով փաստարկում է, որ Հայաստանը դատապարտված է կոմպլիմենտար քաղաքականություն վարելուն, սակայն նա նաև նշում է, որ Հայաստանին Ռուսաստանի օժանդակությունը ՀԱՊԿ-ի շրջանակներում ավելի քան անհրաժեշտ է, քանի որ Ադրբեջանի հետ հավանական պատերազմի դեպքում ոչ միայն հնարավոր են լուրջ կորուստներ Ղարաբաղում, այլև Հայաստանը կարող է դառնալ թիրախ (Маркедонов 2013):

Տեր-Մաթևոսյանի և այլոց (2017) հետազոտության մեջ նշում է, որ Հայաստանը Մաքսային միության անդմակացության մասին ԵՄ-ին տեղեկացրել է Սերժ Սարգսյանի՝ Մոսկվա կատարելիք այցից երեք օր առաջ՝ օգոստոսի 31-ին (Ter-Matevosyan et al 2017: 343): Այս հանգամանքը ամենայն հավանականությամբ այդպես է, քանի որ հայկական տպագիր մամուլը, բացի պաշտոնական «Հայաստանի Հանրապետություն» թերթից, սուր հարցադրումներ էր անում, թե արդյոք ԵՄ Ասոցացման համաձայնագիրը կստորագրվի: Իհարկե, ենթադրել, որ մամուլին դիտավորյալ արտահոսք է եղել, հնարավոր չէ, սակայն հատկանշական է, որ օգոստոսի 31-ին Կարեն Բեքարյանը ուկրաինական «obozravatel.com»-ին տված հարցազրույցում նշում է, որ «ԵՄ-ի

խոստացված դոնորների կոնֆերանսը տեղի չի ունեցել, ավելին՝ ԵՄ-ն խոստացել էր ամեն ինչ անել, որ հայ-թուրքական սահմանը բացվեր, սակայն դա տեղի չի ունեցել» (ibid, 2017: 346):

Օգոստոսի 29-ին, ԱՊՀ Երկների Ինստիտուտի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Ալեքսանդր Մարկարովը «Արմենպրես»-ին տված հարցազրույցում նշում է.

«Այս պահին ԵՄ-ն անվտանգության որևէ երաշխիք չի կարող տալ Կովկասում, ԵՄ-ն որևէ մեխանիզմ չունի Հայաստանի ապահովությունը երաշխավորելու համար... Եթե Ասոցացման համաձայնագիրը ստորագրվի, ես հույս ունեմ, որ ինչ-որ ֆորմատով կպահպանենք մեր կապերը ԱՊՀ երկների մեր գործընկերների հետ, նաև Իրանի հետ կապերն են կարևոր» (Маркаров 2013):

Նմանատիպ հայտարարությունները այս կամ այն ֆունկցիոնալ գործիչների կողմից միտված էին ստեղծելու համապատասխան ֆոն սեպտեմբերի 3-ի Սերժ Սարգսյանի որոշման լեգիտիմության համար: Սեպտեմբերի 3-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպումից հետո նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց Հայաստանի՝ Մաքսային Միության (այնուհետև՝ Եվրասիական տնտեսական միության) անդամ դառնալու ցանկության մասին: Նաև կարևոր է նշել, որ որոշումը քողարկված էր արտաքին քաղաքականության հարցերով զբաղվող ֆորմալ ինստիտուտներից, եթե հաշվի առնենք երկու շաբաթ առաջ արտաքին գործերի փոխնախարար Շավարշ Քոչարյանի հավաստիացումը, որ Հայաստանը ստորագրելու է ԵՄ Ասոցացման համաձայնագիրը:

Մեր այսօրվա բանակցությունների հիմնական թեմաներից մեկը Հայաստանում ենթակառուցվածքային վերափոխումների ապահովման անհրաժեշտությունն էր, մեր տնտեսության արդիականացման ու դիվերսիֆիկացիայի ապահովումն էր, որտեղ Ռուսաստանը ներկայացված է բազմաթիվ ձեռնարկություններով:

Մանրամասնորեն կանգ առանք մեր փոխգործակցության հորիզոններն ընդլայնող հեռանկարային ուղղությունների վրա: Դա և՛ ռազմատեխնիկական համագործակցությունն է, և՛ վառելիքաէներգետիկ համալիրը՝ ներառյալ միջուկային էներգետիկայի ոլորտում համագործակցությունը, տրանսպորտի և հաղորդակցությունների բնագավառի խնդիրները:

Մենք հանգամանալի քննարկում անցկացրեցինք նաև եվրասիական ինտեգրացիայի հարցերի վերաբերյալ, և ես

հաստատեցի Հայաստանի ցանկությունը՝ միանալու Մաքսային միությանը և ներգրավվելու Եվրասիական տնտեսական միության ձևավորման գործընթացում:

20 տարի առաջ Հայաստանը Ռուսաստանի և ԱՊՀ այլ երկրների հետ գործընկերությամբ ձևավորեց իր ռազմական անվտանգության համակարգը Հավաքական անվտանգության պայմանագրի ձևաչափում: Այս տասնամյակների ընթացքում համակարգն ապացուցել է իր կենսունակությունը և արդյունավետությունը: Այժմ ՀԱՊԿ-ի մեր գործընկերները ձևավորում են տնտեսական փոխգործակցության նոր հարթակ: Ես քանիցս ասել եմ, որ գտնվելով ռազմական անվտանգության մի համակարգում, անհնար է և անարդյունավետ մեկուսանալ համապատասխան աշխարհատնտեսական տարածքից:

Սա ռացիոնալ որոշում է, այս որոշումը բխում է Հայաստանի ազգային շահերից: (Սարգսյան Սերժ 2013)

Սեպտեմբերի 3-ի ելույթը դիտարկելիս անվտանգայնացման գործընթացն ակնառու է դառնում: Վերոնշյալ պարագրաֆի վերջին նախադասությունը հստակեցնում է անվտանգայնացման փորձը, երբ նշվում են ռազմական «անվտանգության համակարգը» և «աշխարհատնտեսական տարածքը» կատեգորիաները: Երկրորդ կարևոր հանգամանքը այն է, որ ողջունի խոսքից հետ անմիջապես նշվում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծմանն ուղղված քայլերը, որը ծառայում է որպես համատեքստ: Առկա են նաև «ռազմատեխնիկական համագործակցություն», «վառելիքաէներգետիկայի» ոլորտ՝ ներառյալ միջուկային էներգետիկայի ոլորտի համագործակցություն տերմինները: Տեքստի նախավերջին պարագրաֆում, սակայն, արտաքին քաղաքականության սահմանափակումը հաղթահարելու փորձ է կատարում՝ նշելով եվրոպական կառույցների հետ երկխոսության շարունակությունը:

Այս հայտարարությունը ուղղակիորեն արձագանքում է նախկինում ստեղծված դիսկուրսի անվտանգայնացմանը, սակայն նաև ներառում է քաղաքականության ապաստանվտանգայնացման քաղաքական, այն է՝ ՀՀ-ի՝ ԵՄ-ի հետ երկխոսության շարունակությունը: Սեպտեմբերի 5-ին նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը հայտարարում է, որ Հայաստանը պատրաստվում է Վիլնյուսի գագաթնաժողովում նախաստորագրել ԵՄ Ասոցացման համաձայնագիրը, և եթե տնտեսական հատվածով հնարավոր չէ վերցնել բոլոր քաղաքականները, ապա Հայաստանը կստանձի նրանք, որոնք հնարավոր են (Սարգսյան Վիգեն 2013):

Հայկական թերթերի որակական վերլուծությունը ապացուցում է, որ այս որոշումից հետո երկու այս թեզերը տարբեր կերպ են ընկալվում:

«Առավոտ» օրաթերի որակական հետազոտությունը սեպտեմբերի ընթացքում ցույց է տալիս որոշման նկատմամբ լեգիտիմացման փորձի վերաբերյալ դիմադրություն: Օրինակ՝ ՀՀԿ խմբակցության ղեկավար Հովհաննես Սահակյանի հետ հարցազրույցում հստակ հարց է բարձրացվում, թե արդյոք փորձ չի արվում որոշման պատասխանատվությունը դնել ԵՄ-ի ուսերին (Գրիգորյան 2013): Կամ փորձագետների միջոցով շեշտադրվում է, որ այն թեզը, թե ժողովուրդը համաձայն է այդ որոշմանը, որևէ կերպ չի ապացուցվել սոցիոլոգիական հարցման միջոցով (Առավոտ 2013):

Անվտանգացման թեզը՝ Հայաստանի փրկության վերաբերյալ, հստակ արտացոլվում է միայն «Իրավունք» թերթում (Իրավունք 2013c): «Հայկական ժամանակ»-ում նույնպես բարձրացվում է ՀՀԿ-ի պատասխանատվության հարցը (Բարսեղյան 2013):

Ի տարբերություն տպագիր մամուլի՝ փորձագետները՝ ֆունկցիոնալ գործիչները, այս պարագայում կրկնում են իշխանության անվտանգացման թեզը: Ալեքսանդր Իսկանդարյանը «Panorama.am»-ի հետ հարցազրույցում նշում է, որ «Եվրասիական միության և ԵՄ-ի միջև Հայաստանը ընտրեց ՀԱԿՊ-ը» (Искандарян 2013): Ալեքսանդր Մարկարովի՝ նույն օրվա հարցազրույցը արտահայտում է «ապաստանագայնացման» թեզը, որ Եվրամիության հետ հարաբերությունները, անկախ ամեն ինչից, շարունակվելու են, իսկ նույն՝ Կովկաս Ինստիտուտի փոխտնօրեն Սերգեյ Մինասյանը նշում է, թե, «կարող է տպավորություն ստեղծվել, որ Հայաստանի վրա ճշնումներ են գործադրվել, սակայն Հայաստանի ընտրությունը պայմանավորված էր ազգային անվտանգության նկատառումներով» (Panorama.am 2013): Ռուսական տպագիր մամուլը նույնպես պայմանավորում է Հայաստանի ընտրությունը անվտանգության նկատառումներով՝ Իդուն անելով Պուտինի՝ Բաքու այցին (Борисов 2013; Смирнов 2013):

Ռուսաստանյան փորձագետների տեքստերի որակական վերլուծությունը նույնպես համընկնում է այս երկու ուղղություններին. Նկատվում է խնդրի անվտանգայնացում, բայց նաև որոշման նորմալիզացիայի փորձ է արվում՝ խոստանալով, որ ԵՄ-ի հետ հարաբերությունները կշարունակվեն: ՌԴ ՔԱ Արևելագիտության ինստիտուտի աշխատակից Անդրեյ Արեշևը, անդրադառնալով Հայաստանում՝ Մաքսային Միություն մտնելու որոշման դեմ բողոքողին, նշում է.

«Հայաստանում եվրոպամետ ուժերի ավելորդ հուզականությունը մի քիչ ջղածիգ է, համաձայնեցված պայմանագիրը ոչ մի կերպ չի բացառում ԵՄ-ի հետ համագործակցության կետերը... «և՛-և՛»-ը առաջին հերթին ընկալելի չէր եվրոպացիների (և նրանց թիկունքին կանգած ամերիկացիների) համար» (Арешев 2013):

Իր հերթին Մոդեստ Կոլերովը նշում է.

«Ինչքան էլ Հայաստանի քարոզչամեթոդական փորձեր ներկայացնել, որ ԵՄ ասոցիացիան «գուտ» գումար և այլ եվրոպական արժեքներ ստանալու համար է, իսկ Ռուսաստանից և ՀԱՊԿ-ից՝ անվտանգություն, հստակ է, որ այն ի վերջո բերելու էր ՀԱՊԿ-ի ետ պաշտպանական հարաբերությունների վատթարացմանը» (Колеров 2013a):

Մամուլի՝ հետագա ամիսների դիտարկումը ցուցադրում է, որ պաշտոնական «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում ավելանում են այն հոդվածները, որոնք մի կողմից գովերգում են հնարավոր տնտեսական դիվիդենտները Մաքսային Միության անդամակցությունից հետ, մյուս կողմից ներկայացնում են Վիլնյուսում կայանալիք զագաթնաժողովին Հայաստանի մասնակցությունը որպես «և՛-և՛» քաղաքականության հաղթանակ: «Առավոտ»-ում որոշումը հիմնականում կապվում է ռուսական պարտադրանքի հետ, իսկ նախագահ Ս.Սարգսյանի պատասխանատվությունը ավելի քիչ է քննարկվում: «Շատ մեծ բան է եղել: Վիլնյուսում վաղը չէ մյուս օրը ամրագրվելու է մի փաստ, որ Հայաստանից դուրս կայացված և հեռուստատեթերով հայաստանցիներին ներկայացրած որոշումը մեզ ցույց տվեց, որ իրավունք չունենք ընտրել մեր երկրի հեռանկարը, մեր գործընկերներին» (Սաֆարյան 2013):

«Իրավունք» թերթում բոլոր քննադատությունները՝ ուղղված Մաքսային Միությանը միանալուն, համահավասարվում էր դավաճանության, պետության շահերին դեմ լինելու հետ (Իրավունք 2013a): «Հայկական ժամանակը» շարունակում է հիմնական գիծը և նշում, որ Հայաստանի արտաքին քաղաքականությունը սխալ է վարվել, որի պատճառով Հայաստանը ավելի մեծ կախվածության մեջ է ընկել Ռուսաստանից (Հայկական ժամանակ 2013): Ռուսական մամուլի հետագա անրադարձը սահմանափակվում է Վիլնյուսի զագաթնաժողովի մասին պաշտոնական տեղեկատվություն հայտնելով:

Հատկանշական է, որ փորձագետների հետ հարցազրույցների վերլուծությունը վեր է հանում նույն տրամաբանությունը: Թեպետ ԵՏՄ-ն տնտեսական կառույց է, Հայաստանի անդամակցությունն ուներ անվտանգային նկատառումներ: Բացառությամբ փորձագետներից մեկը՝ բոլորը պնդում են, թե ՀՀ անդամակցությունը կանխատեսելի էր երկու պատճառով: Նախ՝ դժվար էր պատկերացնել հայկական «և՛, և՛» սցենարի իրագործումը և պետության անդամակցությունը տնտեսական ու ռազմական տարբեր կառույցների: Այսինքն, ենթադրելի էր, որ Հայաստանը ստիպված է լինելու հրաժարվել տարբերակներից մեկից, այս պարագայում՝ Ասոցացման համաձայնագիրը ստորագրելուց: Երկրորդ՝ Ռուսաստանը միտված էր տապալելու Արևելյան

գործընկերության ծրագիրը, որպեսզի հետ պահեր Ուկրաինային եվրաինտեգրումից: Այս համատեքստում Հայաստանը դիտարկվում է որպես խաղաքարտերից մեկը և ոչ թե վերջնական պատակ: Բացի վերոնշյալ երկու խորքային պատճառներից՝ կային նաև ազդանշաններ, որոնք ստիպում էին ենթադրել գործընթացի վերջնարդյունքի մասին: 2013 թվականի գարնանն արդեն իսկ ռուս փորձագետները բարձրաձայնում էին Հայաստանի՝ երկու տարբեր կառույցներում ընդգրկվելու անհնարինության մասին: Թեպետ հայտարարությունները չեն արվել բարձրագույն մակարդակով, սակայն ինչպես հարցված փորձագետներից մեկն է նշում, ռուս փորձագետները և նախկին պաշտոնյաները այս պարագայում հանդես են եկել որպես Ռուսաստանի տեսակետի հաղորդակցման ուղիներ:

Ինչ վերաբերում է սեպտեմբերի 3-ի որոշման դրդապատճառներին, ապա բոլոր փորձագետները նշում են անվտանգությունը՝ որպես գերակա խթան: Թեպետ անվտանգությունը որոշակիորեն կապված է նաև տնտեսական բաղադրիչի հետ, մասնավորապես՝ էներգակիրների, սակայն շրջադարձը գլխավորապես պայմանավորված էր արցախյան հակամարտության և դրա վրա Ռուսաստանի ունեցած լծակների հետ: Փորձագետներից մեկի պնդմամբ՝ «*վտանգն այն էր, որ Ռուսաստանը կարող էր վերանայել իր անվտանգային հարաբերությունները Հայաստանի հետ: Այսինքն՝ ոչ թե քննարկվել է, թե Հայաստանը ինչ կարող է շահել, այլ թե ինչ կարող է կորցնել*»:

Ի տարբերություն ԵԱՀԿ ՄԽ մյուս համանախագահող երկրների՝ Ռուսաստանը չի դիտարկվում որպես զուտ բանակցային միջնորդ: Ռուսաստանի ազդեցությունը չափելիս առաջին հերթին հաշվի են առնվում վերջինիս աշխարհաքաղաքական շահերը տարածաշրջանում: Այդ պատճառով էլ, ինչպես հարցված փորձագետներից մեկն է պնդում, ԵՏՄ ինտեգրումը ոչ թե տնտեսական, այլ քաղաքատնտեսական որոշում էր:

Ինչ վերաբերում է հասարակական արձագանքին սեպտեմբերի 3-ի որոշմանը, փորձագետների գնահատականները տարբերվում են: Փորձագետների մի մասը (3 հոգի) կարծում է, թե հանրությունը իրենց խաբված էր զգում իշխանությունների կողմից, ինչի արդյունքում առաջացան որոշակի հակառուսական տրամադրություններ: Ընդ որում՝ նրանք բացասական են գնահատում նաև իշխանությունների կատարած բացատրական աշխատանքները՝ պնդելով, որ իշխանությունների խոստումները, կապված ԵՏՄ մտնելու հետ, ևս կյանքի չկոչվեցին:

Փորձագետների մյուս խումբը (5 հոգի) հակված է կարծելու, որ հանրության կողմից որոշումը ընկալվել է որպես տրամաբանական, ինչը պայմանավորված է Ռուսաստանի հետ ունեցած առևտրատնտեսական, բարեկամական սերտ կապերի հետ: Ինչպես նշում է փորձագետներից մեկը.

«ժողովուրդ ասելով՝ պետք չէ հասկանալ միայն ֆեյսբուքահայտությանը և Երևանի կենտրոնում

ապրող մարդկանց: Մարգային բնակչության մեծ մասը իր ապագա ծրագրերը կապում է Ռուսաստանի, ավելի ճիշտ՝ խոպանի հետ: Ժողովրդի հետ բացատրական աշխատանք տանելու կարիք չի եղել»:

Ինչ վերաբերում է ռուս փորձագետների բերած հիմնավորումներին, ապա վերջիններս կրկնում էին ՀՀ իշխանությունների բերած պատճառաբանությունները, միայն թե ավելի բաց համատեքստով: Եթե ՀՀ իշխանությունները իրենց որոշումը կապում էին տնտեսական ներ ձեռքբերումների, Ռուսաստանի հետ ունեցած բարեկամական հարաբերությունների և Արցախի գործոնի հետ, ապա ռուս փորձագետների կողմից այդ պատճառաբանությունները հնչում էին որպես Հայաստանի կախվածություն Ռուսաստանից տնտեսական, անվտանգային ու քաղաքական առումներով:

Փաստորեն, թե՛ մամուլի հրապարակումները, հայ և ռուս փորձագետների հայտարարությունները ու հայ փորձագետների հետ անցկացված հարցազրույցների վերլուծությունը ապացուցում են, որ ՀՀ անդամակցությունը ԵՏՄ-ին ներկայացվել է որպես անվտանգության երաշխիք ՀՀ և Արցախի համար: Այսինքն, անվտանգայնացման հարացույցը կիրառելի է այս գործընթացի համար:

Ապրիլյան պատերազմի դասերը և ռուսական «անվտանգության հովանոցը»

Հայաստանի անդամակցությունը Մաքսային միությանը, որը հետագայում վերաճեց Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ), նույնիսկ հայաստանյան իշխանությունների ջանքերի պարագայում հարթ չընթացավ: Հայաստանը պաշտոնապես անդամակցեց ԵՏՄ-ին 2014 թ.-ի մայիսին, իսկ ԵՏՄ-ն սկսեց գործել 2015 թ.-ի հունվարից: 2013-ի՝ «անվտանգայնացման» քարոզարշավը տվեց իր պտուղները՝ հասարակության հիմնական շերտերում ամրագրելով այն թեզը, որ ԵՏՄ-ի անդամակցությունը պայմանավորված էր Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակով: Իհարկե, կարևոր էին նաև էներգետիկ անվտանգության և տնտեսական խոստումները, որ անկընկալվում էին ԵՏՄ-ից, սակայն սա երկրորդական դեր էր խաղում: Համաձայն Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի՝ 2015 թվականի հարցմանը՝ հայաստանցիների մեծամասնությունը նախընտրում էր ԵՏՄ-ն (52%) ԵՄ անդամակցությունից (37%) (CRRC Barometer 2015): Սակայն թե՛ տնտեսական, թե՛ անվտանգությանը վերաբերվող կանխատեսումները չիրականացան: 2015 թվականին ուղղակի ներդրումներն անկում ապրեցին՝ 2014 թվականի 348 միլիոն դոլարից հասնելով 146 միլիոն դոլարի (Ter-Matevosyan, et all, 2017:352): Այս

համատեքստում անվտանգայնացման հարացույցը կրկին օգտագործվում է 2016 թվականի Ապրիլյան պատերազմի և նրան հաջորդող դեպքերի ժամանակ:

Ապրիլի 2-5-ը Լեռնային Ղարաբաղի միկրո-պատերազմը ոչ միայն իր հետ բերեց հասարակական լայն մոբիլիզացիա, այլև հարցականի տակ դրեց Ռուսաստանի՝ որպես Հայաստանի անվտանգության երաշխավորի հանրային ընկալումը: Ջոհերի աննախադեպ քանակը (ավելի քան 100 զոհ), ռազմական կարևորություն ունեցող երկու տարածքների գրավումը հակառակորդի կողմից (Լեյլե Թեփեյի և Թալիշի դիրքերի կորուստ՝ ընդհանուր առմամբ 800 հա) (Հակոբյան 2016) առաջացրին անվստահություն նաև ՀՀ իշխանությունների նկատմամբ: Այս պարագայում ՀՀ իշխանություններն ավելի կենտրոնացած էին սեփական լեգիտիմությանը վերաբերվող հարցադրումների վրա և ստիպված էին հանրային դժգոհությունը մեղմող ուղիներ փնտրել: Սակայն կարևոր է նշել, որ հանրության շրջանում անընդհատ ավելանում էր Ռուսաստանի նկատմամբ քննադատությունը՝ կապված Ռուսաստանի կողմից Ադրբեջանին զենք մատակարարելու իրողության և Ռուսաստանի՝ Ադրբեջանին չսաստելու հետ: Փաստորեն, եթե մինչև պատերազմը հանրության մեջ առկա էր ակնկալիքները, թե Ռուսաստանը՝ որպես Հայաստանի ռազմավարական դաշնակից, պատերազմի դեպքում հանդես է գալու հօգուտ Հայաստանի, չբավարարվեցին: Ըստ այդմ՝ Հայաստանի իշխանությունների առջև դրված էր երկու խնդիր. չեզոքացնել իր հասցեին հնչեցվող մեղադրանքները և որևէ կերպ արձագանքել Ռուսաստանի հասցեին հնչեցվող մեղադրանքներին:

Անմիջապես պատերազմի օրերին պաշտոնական լրատվությունը շատ զգոն էր և թաքցնում էր տարածքների և զոհերի մասին տեղեկատվությունը: Ապրիլի 4-ին նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական ելույթով հանդես եկավ ԵԱՀԿ դեսպանների առջև.

«Ես ձեզ հավատացնում եմ, որ որևէ տարածք ադրբեջանցիները չեն ազատագրել, այս պահին ողջ շփման գծի երկայնքով ընդամենը մի փոքրիկ հատված հարավում և մի փոքրիկ հատված հյուսիսում, որ հույս ունեմ՝ մինչև մեր շփումն ավարտենք, այլևս այդ հատվածը հյուսիսում չի լինի, ընդամենը 200-300 մետր տարածք են գրավել ադրբեջանցիները՝ տալով ամեն մետրի համար մեկից ավելի զոհ»:

...Ավելին, ես հրահանգել եմ արտաքին գործերի նախարարությանը՝ աշխատել Լեռնային Ղարաբաղի հետ ռազմական փոխօգնության պայմանագիր կնքելու ուղղությամբ: Եվ այստեղ պետք է նշեմ՝ մեկ անգամ չէ, որ ես հայտարարել եմ, որ եթե, իրոք, ռազմական գործողությունները շարունակվեն և ստանան լայնածավալ

*մասշտաբ, Հայաստանի Հանրապետությունը ճանաչելու է
Լեռնային Ղարաբաղի անկախությունը:*

*...Իմիջիայլոց, պետք է ասեն, որ ընդամենը թույլներ առաջ
առաջին անգամ ադրբեջանական զինված ուժերը
կիրառեցին ծանր հրանետ, ռուսերեն բառը օգնեմյոտ է
կոչվում, և դրա տիպը, զինատեսակը կոչվում է «Տոս-1»:
Իսկ երբ Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակը
հակազդում է իրեն անգամներ գերազանցող Ադրբեջանի
բանակին, նրան կոչ են անում «ցուցաբերել
զսպվածություն»:*

*Եվ վերջում. ԵԱՀԿ մասնակից երկրներից մեկը` Թուրքիան,
որը հաճախ հիշեցնում է իր Մինսկի խմբի
անդամակցության մասին, հանդես է գալիս
տարածաշրջանում մեծ պատերազմ հրահրելու դիրքերից և
բացահայտ քաջալերում է ադրբեջանական
ղեկավարության արկածախնդիր քաղաքականությունը»:*

Ելույթի այս հատվածները առանձնացվել են` ըստ ուղերձների կարևորության: Առաջին քայլով Ս. Սարգսյանը փորձում է ռացիոնալիզացնել իրավիճակը` դիտավորյալ կերպով նվազեցնելով կորսված տարածքների կարևորությունը: Երկրորդը ուղերձը, ինչպես հետագայում պարզվեց, զուտ սպառնալիք էր, թե Հայաստանը կարող է ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը, եթե էսկալացիան շարունակվի²: Երրորդ` «ոչ ուղղակի» ուղերձը Ռուսաստանի համար էր, երբ մանրամասնվում էր զենքի այն տեսակը, որ կիրառել էին Ադրբեջանի զինված ուժերը: Վերջում անրադառնում է Թուրքիային առ այն, որ վերջինիս նախագահ Էրդողանը իր լիակատար օժանդակությունն էր հայտնել Ադրբեջանին:

Հայկական տպագիր մամուլի` «Ապրիլյան պատերազմին» հիմնական անրադարձը սկսվում է ապրիլի 5-ի զինադադարի հաստատումից հետո: Մինչ այդ թե՛ թերթերը, թե՛ համացանցային լրատվությունը հիմնականում տրամադրում էին պատերազմական գործողությունների մասին տեղեկություններ:

Պաշտոնական «Հայաստանի Հանրապետություն» թերթը չեզոք դիսկուրս է պահպանել և միայն արձագանքել է հակամարտության խաղաղ լուծման կոչերին: Հատկանշական է, որ ապրիլի 7-ին հրապարակել է նաև ռուսական մամուլի

² Ճանաչման նախագիծը ընդունվեց Ազգային ժողովում, սակայն օրենքի նախագիծը առաջադրվեց ոչ թե Հայաստանի Հանրապետական Կուսակցությունի կողմից, այլ ընդհանուր ներկայացուցիչների: Ի վերջո նախագիծը այդպես էլ մնաց թղթի վրա:

անրադարձը պատերազմին: Օրինակ՝ հղում անելով ոչ այնքան հայտնի mngz.ru-ին՝ մեջբերել է Եվգենի Սատանովսկու խոսքերը.

«Հայկական ուժերը բարոյապես ավելի բարձր մակարդակի վրա են, իսկ զինված ուժերը՝ ավելի լավ պատրաստված... Ռուսաստանը պետք է մտածի իր քաղաքացիների մասին, որ 102 բազայում են, և Հայաստանի վրա հարձակման դեպքում ՌԴ-ն հարված կհասցնի և կփակի Հայաստանի օդային սահմանները (С300 համակարգի շնորհիվ)» (Հանրապետություն Հայաստանի, 2016):

Այս թեզը, որ Ռուսաստանը միայն կմիջամտի հակամարտությանը, եթե բուն Հայաստանի Հանրապետության տարածքի վրա հարձակում կլինի, հետագայում վերարտադրվեց նաև այլ *ֆունկցիոնալ գործիչների* կողմից՝ որպես ապանվտանգայնացման գործիք: «Իրավունք» թերթի կոնտենտ վերլուծությունը ցույց է տալիս, որ ռուսական գործունը դիտարկվում էր միայն դրական լույսի ներքո, մինչդեռ պատերազմի հրահրող էր դիտարկվում միայն Թուրքիան (Իրավունք 2016):

Ի տարբերություն այս երկու թերթերի՝ «Առավոտի» և «Հայկական ժամանակի» կոնտենտ վերլուծությունը ցույց է տալիս՝ ինչպես են այդ լրատվամիջոցները ներկայացրել Ռուսաստանի կողմից խոստացված անվտանգության երաշխիքների բացակայությունը՝ հղում անելով 2013 թվականին ԵՏՄ մտնելու որոշման սխալականությանը (Գաբրիելյան 2016; Հայկական ժամանակ 2016): Հայաստանի իշխանությունների համար ստեղծված իրավիճակում բավականին դժվար էր հանրային դժգոհությանը ընդունելի պատասխան գտնել: Ղազախստանի և Բելառուսի պաշտոնական աջակցությունը Ադրբեյջանին, իսկ ավելի ուշ ՌԴ վարչապետ Մեդվեդևի և ՌԴ փոխվարչապետ Ռոգոզինի հայտարարությունները սահմանափակեցին ՀՀ իշխանությունների տեղեկատվական գործունեությունը. Վերջիններս կենտրոնացան սեփական բացթողումները կոծկելու և հնարավորության դեպքում դիվիդենտեր շահելու վրա: Այս պարագայում ռուսաստանյան իշխանավորները իրենք են հանդես գալիս որպես *անվտանգայնացնող գործիչներ*:

«Ես չեմ բացառում, որ այս դեպքում գոյություն ունեն գործոններ, որոնք դրսից ազդում են այդ հակամարտության վրա: Դուք նշել եք թուրքական գործոնը: Հավանաբար այդ թուրքական գործոնը կա թեկուզ այն պատճառով, որ Թուրքիան արտահայտել է իր դիրքորոշումը:

... Եթե մենք մի րոպե պատկերացնենք, որ Ռուսաստանը հրաժարվել է այս դերից (մենք հիանալի հասկանում ենք, որ այդ տեղը դատարկ չի մնա) [զենք վաճառողի], զենք կգնեն

այլ երկրներից, դրա մահաբերության աստիճանը դրանից չի նվազի: Բայց միաժամանակ կարող է խախտվել գոյություն ունեցող հավասարակշռությունը՝ կապված այն բանի հետ, որ մենք հասկանում ենք, թե ինչպիսին են մեր գործընկերների պահանջները, և բոլորը պատկերացնում են տարածաշրջանում ուժերի դասավորությունը»: (Մեդվեդև 2016)

Նման ձևակերպմամբ ուղերձ է հղել նաև ՌԴ փոխվարչապետ և ռազմարդյունաբերական համակարգի ղեկավար Դ. Ռոզոգինը.

«Ձեզ թվում է՝ մյուսներն էլ կդադարեցնեն զենք մատակարարել: Հարցը դրանում չէ: Երբ մենք զենք ենք մատակարարում, մենք գիտենք, որ կա որոշակի հավասարակշռություն, և հենց դա է հանդիսանում պատերազմը զսպող մեխանիզմ: Եվ երբ մենք զնանք այդտեղից, հենց դադարենք լինել թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի ստրատեգիական գործընկերը, այնտեղ կհայտնվեն տղաներ, որոնք ավելի «հմտացած են» քաղաքականության մեջ, և նրանք այդտեղ իրական մասդաց կսարքեն՝ մեծ թվով զոհերով»: (Ռոզոգին 2016)

Հիմնական թեզը, որ ռուս պաշտոնյաններն էին փորձում հիմնավորել, այն էր, որ զենքի առևտուրը այսպես թե այնպես շարունակվելու է, իսկ երկրորդիվ՝ անվտանգայնացվում են Հայաստանի՝ զենք ձեռք բերելու հնարավորությունները: Անվտանգայնացման օբյեկտը հայ-ռուսական հարաբերություններն են, որոնց այլընտրանքը, ըստ անվտանգայնացնող գործիչների, այլ երկրների (ենթադրվում է՝ Արևմուտքի և Թուրքիայի) կողմից Ադրբեջանի զինումն է: Իհարկե, այս թեզերը ավելի բորբոքեցին Հայաստանի բնակչությանը, հատկապես երբ Ռուսաստանի կողմից հավասարության նշան էր դրվել Հայաստանի և Ադրբեջանի միջև: Այս պարագայում նույնիսկ Հայաստանի բարձրագույն ղեկավարությունն էր ստիպված քննադատել Ռուսաստանի մոտեցումը: Ձենքի վաճառքի հարցը բավականին սուր էր արտահայտվում, քանի որ Հայաստանի՝ 200 միլիոն դոլարի զենքի ձեռք բերումը ռուսական վարկի միջոցով ուշացել էր, և փաստորեն Հայաստանը այդ զինապաշարը չէր ստացել պատերազմից առաջ: Պատահական չէ, որ Սերժ Սարգսյանը Պերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հետ հանդիպման ընթացքում զերմանացի լրագրողի հարցին պատասխանում է հետևյալ կերպ.

«Իրոք, Ռուսաստանը մեր ռազմավարական դաշնակիցն է, և մենք գտնվում ենք անվտանգության նույն համակարգում: Եվ բնական է, որ մենք ցավ ենք զգում, երբ Ռուսաստանը, և

ոչ միայն Ռուսաստանը, այլև այդ կառույցի անդամները զենք են վաճառում Ադրբեջանին: Բայց շատ լավ հասկանում ենք, որ մեր հնարավորությունները սահմանափակ են՝ ազդելու այդ պրոցեսի վրա» (ՍարգսյանՍերժ 2016):

Նույն գաղափարն է բարձրաձայնում նաև այդ ժամանակ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը. *«Լավ կլինի, որ չվաճառեն, բայց դա իրենց գործն է, իրենք են որոշում: Մենք հորդորել ենք և հորդորում ենք, որ զենքը չվաճառեն, իրենց էլ ասել ենք, որ լավ չենք համարում, որ իրենք զենք են վաճառում:»* (Աբրահամյան 2016):

Այս հարցադրումները թեև բավականին տեղին էին, սակայն ուղեկցվում էին նաև Ռուսաստանի նկատմամբ որևէ լծակ չունենալու հանգամանքով (ռացիոնալիզացիա): Այս հայտարարությունները ոչ միայն Ռուսաստանից եկող ուղերձների արձագանքն էին, այլև ուղղված էին ներքին լսարանին: Ի տարբերություն բավականին զուսպ հայտարարությունների երկրի բարձագույն ղեկավարության կողմից՝ Ազգային ժողովի պատգամավորները, ներառյալ Հայաստանի հանրապետական կուսակցության որոշ ներայացուցիչների, բարձրաձայնում էին զենքի վաճառքի անընդունելիության մասին (Զոհրաբյան 2016; Ֆարմանյան 2016): *«Լուսավոր Հայաստան» կուսակցության ներկայացուցիչ Էդմոն Մարությանը ապրիլ 13-ի հարցազրույցում նշում է. «Իհարկե, Ռուսաստանից մեր պահանջները ավելի շատ են, քան Իսրայելից, Իսրայելը Հայաստանի ռազմավարական դաշնակիցը չէ, այստեղ ուղղակի համեմատելու բան չկա»* (Марукян 2016):

Ռուսական մամուլի՝ ապրիլյան առաջին օրերի կոնտենտի վերլուծությունը (Ապրիլ 2-15, 2016) բավականին չեզոք դիսկուրս է վեր հանում, և Մեդվեդևի այցից հետո հիմնականում հղում է կատարվում *«էներգետիկ անվտանգության»* կատեգորիային: Հայաստանում աճող հակառուսական տրամադրությունները չեն անվտանգայնացվում, և առկա է ըմբռնում վիճակի սրացման պատճառների վերաբերյալ: Օրինակ՝ *«Նեգավիսիմայա Գազետան»* գրում է.

«Հայաստանում Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածից հետո առաջին անգամ են մղվել ԵՏՄ անդամ երկրների հետ հարաբերությունները: Որ գազաթնաժողովը պետք էր անցկացվեր այդտեղ (Երևանում), որոշվել էր պատերազմական գործողություններից շատ ավելի առաջ: Այն պարագայում, երբ Երևանը գտնվում է ռազմական գործողություններից բավականին հեռու, Ղազախստանի այս քայլը ուղղակի բոյկոտի է նման... Ավելորդ ենք համարում դիտարկել այս հարաբերությունները ՀԱՊԿ-ՆԱՏՕ համեմատության առանցքում, արդո՞ք

հնարավոր է պատկերացնել, որ ՆԱՏՕ-անդամ պետությունը կաստարի այն երկրին, որը չի հանդիսանում դաշինքի անդամ, արդյո՞ք սա հնարավոր է հինգերորդ հողվածի պարագայում» (Рокс 2016a):

Ի տարբերություն տպագիր մամուլի՝ պաշտոնական լրատվության կողմից երկու երկրների միջև առկա հարաբերությունների դժվարությունները չեն ներկայացվում, Հայաստանի՝ ԵՏՄ մտնելու որոշումը դիտարկվում է որպես ռացիոնալ և անշրջելի որոշում (Налбандян 2016; Шармазанов 2016a):

Առավել ուշագրավ է ռուս և հայ փորձագետների (ֆունկցիոնալ գործիչների) արձագանքը անմիջապես պատերազմական գործողությունների ավարտից հետո: Ռուսաստանյան այն փորձագետները, ովքեր տարբեր փաստարկներ էին բերում հոգուտ Հայաստանի՝ ԵՏՄ անդամակցության, սկզբնական շրջանում բավականին զսպված էին արտահայտվում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ՝ գիտակցելով Հայաստանում առկա տրամադրությունները; Օրինակ՝ Դմիտրի Մեդվեդևի և Դմիտրի Ռոզդոլինի հայտարարությունների վերաբերյալ Ռուսաստանի ԳԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Անդրեյ Արեշևը նշում է. *«Իհարկե, նման հայտարարությունները ոչ մի կերպ չեն կարող նպաստել ռուսամետ տրամադրությունների ավելացմանը և ավելին՝ դառնում են զգացմունքային և խիստ քննարկումների առարկա... (նման իրավիճակում) աշխարհի յուրաքանչյուր քաղաքական գործիչ պետք է չափազանց զգույշ խոսի կամ, առհասարակ չխոսի սուր և զգացմունքային հարցերի վերաբերյալ»* (Արեշև 2016): *«Ռեզնում»* գործակալության գլխավոր խմբագիրը նույնպես նշում է, որ. *«Ռոզդոլինը և Մեդվեդևը իրենց հայտարարությամբ զրոյի հավասարեցրին ռուսական դիվանագիտության 25 տարվա ջանքերը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում: Հիմա Ռուսաստանը ստիպված է զրոյից իր նկատմամբ վստահության մթնոլորտ ձևավորել»* (Колеров 2016b): ԱՊՀ երկրների ինստիտուտի տնօրեն Ստանիսլավ Տարասովը *«Արմենպրեսին»* տված հարցազրույցում նշում է, թե այն պարագայում, եթե հարձակումը լիներ Հայաստանի վրա, ապա Ռուսաստանն անպայման կմիջամտեր (Тарасов 2016):

Հայաստանյան փորձագետների շրջանակում դիսկուրսի տեսանկյունից կարևորվում էր այն հարցի քննարկումը, թե արդյոք տեղի ունեցածը կարելի է համարել «պատերազմ» թե ոչ: Օրինակ՝ Կովկաս Ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանը նշում է, որ *«նման կերպ պատերազմ չեն սկսում, պատերազմները ունեն ռազմական, ոչ թե քաղաքական նպատակներ, նման դեպքերում կոմբակոմբեր Ստեփանակերտը, ոչ թե սահմանային գոտիները»* (Իսկանդարյան 2016): Փորձագետների մեկ այլ խումբ՝ Ստեփան Գրիգորյանը, Ստյոպա Սաֆարյանը, նաև Թաթուլ Հակոբյանը այս հարձակումը հստակ համարում են պատերազմ՝ անկախ ռազմական գործողությունների ծավալից և բնույթից: Մոտեցումներից առաջինը ապաանվտանգայնացնում է դիսկուրսը, քանի որ դիտարկում է տեղի ունեցածը ընդհանուր էսկալացիայի շղթայում: Այս հարցը

այնքանով է էական, որ անվտանգայնացման դեպքում հանրային հարցադրումները պաշտպանական բացթողումների և Ռուսաստանի դաշնակցային պարտավորվածությունների վերաբերյալ ավելի սուր են արտահայտվում:

Պատերազմին նպաստող արտաքին գործոնների պարագայում հայկական փորձագիտական շրջանակում բավականին հստակ էր, որ Ռուսաստանի կողմից Ադրբեջանի շարունակական զինումը ի վերջո խախտել է ռազմական բալանսը: Սակայն նաև առկա էին տեսակետներ, որտեղ Ադրբեջանի հարձակումը դիտարկվում էր որպես սեփական լսարանին բավարարելու փորձ (Իսկանդարյան 2016), որը հնարավոր է դարձել Թուրքիայի աջակցությամբ (Маркаров 2016): Թեև հիմնականում բոլոր փորձագետները Ռուսաստանի նկատմամբ քննադատություններին ըմբռնումով էին փորձում մոտենալ, այնուամենայնիվ Ռուսաստանի՝ Ադրբեջանին զենք վաճառելու վերաբերյալ Ալեքսանդր Իսկանդարյանը նշում է, որ դրան պետք է նորմալ վերաբերվել և չարժե նեղանալ Ռուսաստանից այդ հարցով (Իսկանդարյան 2016):

Եթե Ապրիլյան պատերազմից անմիջապես հետո ՀՀ իշխանությունները նույնպես խաղարկում էին Ռուսաստանի նկատմամբ հանրային դժգոհությունները, ապա ապրիլի 15-ի ՀԱՊԿ-ի համաժողովից հետո և ապրիլի 19-ին ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովին ընդառաջ Հայաստանի իշխանությունների կողմից փորձ է արվում ստեղծված իրավիճակը *ապաանվտանգայնացնել*: Այսպես, ապրիլի 19-ին ՀՀ-ական պատգամավոր Կարինե Աճեմյանը հայտարարում է, թե ՀՀ նիստում Սերժ Սարգսյանը նշել է. «որ դա [հակառուսական տրամադրությունները] ճիշտ չէ. Ռուսաստանը մեր ռազմավարական գործընկերն է: Պարզապես պետք է հիշել, որ ամեն երկիր իր շահն ունի: Այնուհանդերձ չի կարելի հակառուսական տրամադրություններ սերմանել» (Աճեմյան 2016):

Պաշտոնական լրատվության հետագա կոնտենտային վերլուծությունը վերահաստատում է ապաանվտանգայնացման գործընթացը: Դիսկուրսն արդեն սկսում է ձևավորվել Հայաստանի ու Ռուսաստանի «ընդհանուր շահերի» շուրջ, Սերգեյ Լավրովի այցը լուսաբանվում է դրական լույսի ներքո: Իսկ հունիսի 29-ին ռուսական մամուլը վերատպում է Էդուարդ Շարմազանովի հայտարարությունը. «Ո՞րն է ՀԱՊԿ-ի այլընտրանքը՝ ՆԱՏՕ-ն՝ Թուրքիայով հանդերձ: Սխալ են այն ենթադրությունները, որ Հայաստանը դարձել է ՀԱՊԿ անդամ, քանի որ ՆԱՏՕ-ից հրավեր չի ստացել: Եթե նույնիսկ օրը վեց անգամ ՆԱՏՕ-ից առաջարկ ստանանք, մենք պետք է խորացնենք մեր հարաբերություններ ՀԱՊԿ-ի հետ...» (Шармазанов 2016b): Ռուսական տպագիր մամուլի կոնտենտային վերլուծությունը, բացառությամբ «Նեգավիսիմայա Փազետա» թերթի, որը նշում է Հայաստանում առկա հանրային լուրջ դժգոհության առկայության մասին (Рокс 2016b), ներկայացնում է հայ-ռուսական հարաբերությունները փոխադարձ վստահության լույսի ներքո:

Փորձագետների հետ անցկացված հարցազրույցներն ավելի համակարգված ձևով վեր են հանում վերոնշյալ միտումները: Այսպես՝ բոլոր փորձագետները բացատրում են Ռուսաստանի դիրքորոշումը՝ որպես անձնական շահերից բխող քայլ: Թեպետ նրանք շեշտում են Ռուսաստանի կարևորությունը հակամարտության դադարեցման գործում, կան տարակարծություններ Ռուսաստանից առկա սպասելիքների վերաբերյալ: Այսպես, փորձագետների մեծ մասը (5 հոգի) որոշակի վերապահումներով արդարացնում է Ռուսաստանի դիրքորոշումը՝ նշելով, որ հարձակումը Լեռնային Ղարաբաղի վրա էր, ոչ թե Հայաստանի Հանրապետության, և այդ պարագայում Ռուսաստանը ոչ մի պարտավորություններ չունի: Ինչ վերաբերում է զենքի վաճառքին, թեպետ բոլոր փորձագետները քննադատաբար են մոտենում Ռուսաստանի կողմից Ադրբեյջանին զենք մատակարարելուն, սակայն ներկայացնում են նաև այդ քայլի ռացիոնալ պատճառները, այն է՝ Ռուսաստանի բիզնես շահերը, տարածաշրջանում ուժերի հավասարակշռություն պահելու ցանկությունը, հակամարտության վրա իր ազդեցությունը պահելու անհրաժեշտությունը և այլն: Ինչպես նշում է փորձագետներից մեկը.

«Թեպետ տրամաբանորեն կարող էր բարձրացվել Ռուսաստանի կողմից Ադրբեյջանին զենքի վաճառքի փաստը, սակայն դա Հայաստանի համար առաջնային նշանակության խնդիր չէր: Կար նաև այն հարցը, թե ինչու Ռուսաստանը չի արձագանքում, ինչու ՀԱՊԿ-ը չի արձագանքում: ՀԱՊԿ-ը իրականում չպիտի արձագանքեր, չնայած Բորդյուժան արձագանքեց: Բայց սա էլ առաջնային նշանակության խնդիր չէր հանրության համար»:

Հատկանշական է, որ փորձագետների այս խումբը շեշտում էր նաև այն հանգամանքը, որ Հայաստանը ի գորու չէ կանխել Ռուսաստանի կողմից զենքի վաճառքը Ադրբեյջանին, ուստի այդ հարցը անընդհատ բարձրաձայնելու կարիք չկար: Փորձագետներից մեկի պնդմամբ՝ այս պարագայում Հայաստանը կարող էր միայն սև փիառ անել՝ չմոռանալով սակայն, որ գործ ունի Ռուսաստանի հետ:

Փորձագետներից երեքի կարծիքով Ռուսաստանի դիրքորոշումը իսկապես անընդունելի էր հայ հասարակության համար, մինչդեռ Հայաստանի իշխանությունները զբաղված էին միայն վերարտադրելով ռուսական կողմից ներկայացվող արդարացումները:

Սակայն ամենակարևոր հանգամանքը, որ վեր է հանվել փորձագետների հարցազրույցներից, այն էր, որ այնուամենավնիվ պատերազմից անմիջապես հետո, երբ իշխանությունների խնդիրն արդեն տեղեկատվական դաշտում իրենց գործողությունների արդարացումն էր, Ռուսաստանի նկատմամբ որոշակի դժգոհություն ամեն դեպքում հնչեցվել է: Փորձագետներից մեկի համոզմամբ՝ Հայաստանի իշխանությունները համամիտ էին հանրությունում առկա դժգոհության հետ, դեռ ավելին՝ փորձում էին

օգտագործել հանրային տրամադրությունները՝ Ռուսաստանից որևէ «պարզ» ստանալու ակնկալիքով.

«Սա այն հազվադեպ դեպքերից էր, երբ Հայաստանի իշխանությունները և առաջնորդները մարտահրավեր նետեցին Մոսկվային: Լավրովի այցից հետո անգամ Սերժ Սարգսյանը ցույց տվեց, որ Հայաստանը միանշանակ դեմ է որևէ թիզ հող զիջելուն: Բացի այդ՝ պատերազմից հետո, երբ Դումայի պատվիրակություն էր ժամանել Ազգային ժողով, առաջին անգամ պառլամենտի նախագահը պահանջեց, որպեսզի հանդիպումն անց կացվի հայերենով, ոչ թե ռուսերենով: Երբ Չալուստ Սահակյանը Ռուսաստանում էր, նա դարձյալ հայերենով էր խոսում: Փաստորեն, Հայաստանի իշխանության կողմից հանրության բացասական տրամադրությունները դիտարկվում էին որպես գործոն, որն ուժեղացնում էր իրենց բանակցային դիրքերը՝ օրինակ՝ ընդդիմանալու Ռուսաստանի կողմից խաղաղապահների տեղակայմանը կամ Հայաստանի վրա կիրառվող ճնշմանը»:

Սակայն անհրաժեշտ է շեշտել այն հանգամանքը, որ հակառուսական տրամադրություններ նկատվեցին միայն պատերազմին հաջորդող օրերին: Այդ պարագայում ՀՀ իշխանությունները չէին կարող անպատասխան թողնել կամ փորձել չեզոքացնել Ռուսաստանի դեմ ուղղված մեղադրանքները, որովհետև նաև սեփական բացթողումները արդարացնելու խնդիր ունեին, ինչպես նաև հնարավորություն էին ստացել օգտագործել առկա հանրային դիսկուրսը սեփական ակնկալիքների բավարարման համար: Այդուհանդերձ, արտգործնախարար Լավրովի, վարչապետ Մեդվեդևի այցերից հետո արդեն հանրային դիսկուրսը և հատկապես իշխանությունների արձագանքը վերադարձավ իր նախկին կաղապարին: Այս վերադարձը տեղի ունեցավ աստիճանաբար, նախևառաջ Հայաստանը սեպտեմբերի 21-ի անկախության զորահանդեսին ցուցադրեց Ռուսաստանից ձեռք բերած «Իսկանդեր» համալիրը, երկրորդ հունիսին հայտարարվեց հայ-ռուսական համատեղ հակաօդային պաշտպանության համալիրի ստեղծման մասին, որը ուժի մեջ մտավ 2015 թվականի դեկտեմբերի 23-ին (Lragir.am 2016), երրորդ՝ նոյեմբերի 26-ին ստորագրվեց հայ-ռուսական միացյալ զորախմբի մասին համաձայնագիրը («Իրազեկ Քաղաքացիների Միավորում» 2016): Այս զարգացումներին զուգահեռ ռուսական փորձագիտական շրջանները իրենց հայտարարություններում սկսեցին նշել, որ պատերազմի պարագայում Հայաստանը տիրապետում է այնպիսի զինատեսակի, որ «Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմական բախանքը վերականգնվել է», «հարստացվել և արդիականացվել է զինանոցը, որի պարագայում ռազմական

գործողությունները կերպ չեն կրկնվի, ամենաքիչը ոչ ապրիլյանի ինտենսիվությամբ» (Колеров 2016a; Զատուլին 2017):

Եզրակացություն և քաղաքականության առաջարկներ

Հավաքագրված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի՝ Մաքսային միությանը (հետագայում ԵՏՄ-ին) միանալու որոշումը անվտանգացվել է: Այս գործողությունը տեղի է ունեցել երկու մակարդակում. Ռուսաստանի պարագայում հիմնականում հանդես են եկել *ֆունկցիոնալ գործիչները*՝ փորձագետները, որոնց ստեղծած դիսկուրսը աստիճանաբար տեղափոխվել է Հայաստան՝ 2013-ի ամռանը Ռուսաստանից եկող ճնշումների ներքո: Այս պարագայում Ռուսաստանի անվտանգայնացնող գործիչները առնվազն դիսկուրսիվ մակարդակում բացակայում են, սակայն գործողությունների մակարդակով առկա են եղել (Bourbeau 2014): Անվտանգացվող օբյեկտը Հայաստանի՝ ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիրն էր, որի ստորագրումը հավասարեցվում էր Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անվտանգության դեմ ուղղված քայլի: Թեև Հայաստանի ղեկավարությունը փորձում էր խուսանավել ճնշումներից «և՛, և՛» ռազմավարության միջոցով, ի վերջո տեղի տվեց, ինչից հետո Հայաստանի և Ռուսաստանի քարոզչությունները սկսեցին համընկնել: Հայաստանի մակարդակում անվտանգայնացումը ավելի հստակ է համապատասխանում Կոպենհագենի դպրոցի (1998) մոդելին: Անվտանգայնացնող գործիչները Հայաստանի իշխանության բարձրագույն ներկայացուցիչներն են, ֆունկցիոնալ գործիչները՝ հայաստանյան փորձագետները և որոշ չափով լրագրողական համայնքը, անվտանգայնացման օբյեկտը՝ Լեռնային Ղարաբաղը (թեև դիսկուրսի մակարդակում հիմնականում խոսվում էր Հայաստանի անտվանգության մասին):

Ապրիլյան պատերազմի պարագայում ռուս-հայկական հարաբերությունները բավականին լուրջ քննադատության արժանացան հանրության կողմից: Նախնական շրջանում ռուսական և հայկական պաշտոնական դիսկուրսները էապես հակադրվում են: Նախագահ Վ. Պուտինը միայն հանդես է եկել կողմերին հանդարտեցնելու կոչերով, սակայն վարչապետ Դ. Մեդվեդևը և փոխվարչապետ Դ. Ռոզոզինը զենքի վաճառքի վերաբերյալ ուղղակիորեն հայտարարեցին, որ այն շարունակվելու է, ինչն էլ ավելի բորբոքեց հանրային կրքերը: Այս դեպքում ՀՀ իշխանությունները արտահայտեցին որոշակի դժգոհություն՝ անրադարձելով հանրային գայրություն: Եթե նախագահ Սերժ Սարգսյանը և վարչապետ Հովիկ Աբրահամյանը ավելի զգուշավոր էին արտահայտվում Ռուսաստանի դերի մասին, ապա ավելի ցածր օղակներում դժգոհությունն ավելի սուր էր արտահայտվում: Սակայն այս հակադրումը երկար չտևեց. Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Լավրովի այցին ընդառաջ՝ իրավիճակը արագորեն *ապաստանվտանգայնացվեց*: Սա տեղի է ունենում թե՛ ռուսական փորձագիտական հանրության սփոփող հայտարարությունների, թե՛ հայ փորձագետների զգուշացնող

թեզերի միջոցով: Իհարկե, այս պարագայում ամենակարևորը քաղաքական որոշումն էր Սերժ Սարգսյանի կողմից, որ Ռուսաստանի նկատմամբ դժգոհությունները պետք է հանդարտացվեն:

Հարցին անրադառնալով Բորբյույի և Վուարի (2015) «հանրային դիմադրողականության» տեսանկյունից՝ պարզ է դառնում, որ 2013 թվականին հանրային դիմադրողականությունը ավելի թույլ էր, քանի որ գործընթացի *անվտանգայնացումը* տեղի էր ունենում վերևից ներքև: Բացի այդ՝ ԵՄ Ասոցացման համաձայնագիրը հանրության համար նույն կարևորությունը չէր կարող ունենալ, ինչպիսին էր Հայաստանին անմիջապես սպառնացող վտանգը Ապրիլյան պատերազմի պարագայում: 2016 թվականին *հանրային դիմադրողականությունը* ոչ միայն պայմանավորված էր իշխանությունների նկատմամբ լուրջ անվստահությունով (անկառու էին անվտանգության և արտաքին քաղաքականության վերաբերյալ լուրջ բացթողումները), այլև այն պատճառով, որ 2013 թվականին ԵՏՄ-ի անդամակցությունը հանրությանը ներկայացվել էր որպես անվտանգություն ապահովող գործողություն, իսկ սպասելիքները չէին արդարացվել: Հանրային դիմադրողականության վրա անհերքելիորեն ազդել են նաև քարոզչական թեզերը, որոնք հաղորդակցվել են *ֆունկցիոնալ գործիչների* միջոցով: Հաշվի առնելով այս հանգամանքը, որ Հայաստանը զնալով ավելի ավտորիտար երկիր է դառնում՝ քաղաքականության առաջարկները հիմնականում ուղղված են քաղաքացիական հասարակությանը և միջազգային կառույցներին, սակայն որոշ նկատառումներ կուղվեն նաև ՀՀ իշխանություններին:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն

- Հայաստանի արտաքին քաղաքականության որոշումների ժամանակ հանրային վերահսկողության բարելավելու նպատակով հարցադրումները չպետք է միայն կոնսոլիդացվեն այս կամ այն ինտեգրացիոն ուղղության նպատակահարմարության շուրջ (շատ անգամ այս քննարկումները նաև ինտենսիվացվում են իշխանամետ լրատվամիջոցների կողմից), այլև հատկապես քաղաքական, սահամանադրական պատասխանատվության շուրջ: Թեև աշխարհքաղաքական դիսկուրսի առկայությունը ավելի քանի նորմալ է Հայաստանի պարագայում, սակայն այս հանգամանքը դիտավորյալ շահարկվում է՝ արտաքին քաղաքականության որոշման պատասխանատվությունը մղելով դրսից եկող ճնշումներին:
- Հանրային կաժիքի ձևավորման տեսանկյունից փորձագիտական հանրությունը և լրագրողական համայնքը ունեն շատ կարևոր դերակատարություն: Նախ անհրաժեշտ է պարզորոշել փորձագիտական դաշտում առկա այն կառույցներին և գործիչներին, որոնք բավականին սերտ կապված են ՀՀ իշխանությունների հետ ու նաև ունեն որոշակի կապեր ռուսական և արմտյան փորձագիտական

հանրույթների հետ: Այս կապերը թեպետ որոշ դեպքերում հստակ չեն, սակայն հետազոտող լրագրողական թիմի համար պետք է որ դժվար չլինի դրանք վեր հանելը: Հակառակ դեպքում այն փորձագետները, որոնք լեգիտիմացնում են իշխանության տեսակետները կամ ուղղակիորեն, կամ հղում անելով արտաքին ճնշումներին ստանում են եթերային ժամանակ և համացանցային լրատվամիջոցների ուշադրությունը: Միայն հստակ ցուցադրելով այս կապերը՝ (օրինակ՝ ինտերակտիվ դիագրամների միջոցով) հնարավոր կլինի քննարկել ստեղծվող դիսկուրսում նրանց դերն ու արտահայտած կարծիքները: Անհրաժեշտ է հանրայնացնել նաև այն փորձագետների կարծիքները, ովքեր արտահայտում են առնվազն օբյեկտիվ և անկողմնակալ տեսակետ:

- Ռուսական փորձագիտական դիսկուրսը անհամեմատ ավելի շատ է արտացոլվում հայկական լրատվությունում, քան արևմտյանը: Թեև սա ունի նաև օբյեկտիվ բացատրություն՝ ռուսական մամուլի նկատմամբ ավելի շատ ուշադրությունը և այնտեղի փորձագիտական համայնքի ավելի սերտ կապը հայաստանյան փորձագիտական համայնքի հետ, արևմուտքից հնչեցվող՝ Հայաստանի արտաքին քաղաքականության մասին գնահատականները խլացվում են: Այս պարագայում քաղաքացիական հասարակությունը պետք է ապահովի նման տեսակետների փոխանցումը Հայաստանի հասարակությանը:
- Հայաստանի մասին հիմնական տեղեկատվության ներկայացումը արտաքին աշխարհին մենաշնորհային իրավիճակում է՝ վերահսկվելով ՀՀ իշխանությունների կողմից: Այս պարագայում հարկավոր է ստեղծել ավելի շատ օտարալեզու կոնտենտ՝ անգլերեն, ռուսերեն, վրացերեն և այլն, ինչը թույլ կտա ներգործել արտաքին խաղացողների կարծիքի ձևավորման վրա՝ հաղթահարելով մի քանի փորձագետների մենաշնորհը:
- Հանրային դիմադրողականության շարունակական բարելավման համար էական է առանցքային դեպքերի վերաբերյալ փաստաթղթային, ելույթային, փորձագիտական կարծիքների արխիվացումն ու հանրայնացումը: Օրինակ՝ թեև Ապրիլյան պատերազմի ժամանակ հանրությունը կարողացավ կապել իրողությունը 2013 թվականի որոշման հետ, սակայն համակարգված հիշողությունը բացակայում էր:

Միջազգային կառույցներին, այդ թվում՝ Եվրամիությանը

- ՀՀ-ի միջազգային պայմանագրերի և ներդրումային ծրագրերի վերաբերյալ հանրային լայն իրազեկում իրականացնել՝ հատկապես մարզերում: Բանակցությունների անհրաժեշտ գաղտնիության պահպանման հետ զուգահեռ քաղաքացիական հասարակության կառույցներին տեղեկացնել առնվազն առկա արդյունքների և հետագա քայլերի մասին:
- Հայաստանի մասին փորձագիտական կարծիքի հարցման ընթացքում հնարավորինս փորձել գտնել նոր փորձագետների և խմբերի՝ այդպիսով

խուսափելով կամ նվազեցնելով նույն փորձագիտական խմբերից կարծիքի քաղումը և նույն սխալները կրկնելու հավանականությունը:

- Հետազոտական և մշտադիտարկման ծրագրերի ֆինանսավորման դեպքում համապարփակ կերպով ուսումնասիրել (*due diligence*) դիմումատուներին և հնարավորինս ֆիլտրել այն փորձագիտական խմբերին, որոնք կապված են ՀՀ իշխանությունների հետ, որը կապահովի տվյալների իրական անկախությունը:

ՀՀ իշխանություններին

- Արտաքին քաղաքականության գերակայությունների շուրջ որոշումներ կայացնելուց առաջ փորձագիտական ու հանրային քննարկումներ կազմակերպել, ինչը կօգնի հաղթահարել լեգիտիմության խնդիրները, ինչպես նաև կմեծացնի կառավարման թափանցիկությունը, արդյունավետությունը՝ որոշման իրագործումը դարձնելով ավելի դյուրին:
- Որոշումներից առաջ կազմակերպված հանրային քննարկումները նաև հնարավորություն կընձեռեն իշխանություններին անհրաժեշտության դեպքում հենվել հանրության աջակցության վրա և դիմակայել արտաքին ճնշումներին:
- Համակարգել պետական գերատեսչությունների առանցքային դերակատարների աշխատանքները՝ վերջիններիս իրազեկելով քաղաքական խմորումների մասին, որպեսզի հետագայում հնարավորինս խուսափեն սեպտեմբերի 3-ի որոշմանը նախորդած իրարամերժ հայտարարություններից:

Օգտագործված գրականության և նյութերի ցանկ

«Իրազեկ Քաղաքացիների Միավորում»։ 2016. «Հայ-Ռուսական Միացյալ Զորախմբի Պայմանագիրն Ու Հիմնական Թեզերը.» Առավոտ.
<http://www.aravot.am/2016/12/12/836279/>.

Ademmer, Esther, Laure Delcour, and Kataryna Wolczuk. 2017. “Beyond Geopolitics : Exploring the Impact of the EU and Russia in the ‘ Contested Neighborhood .’” *Eurasian Geography and Economics* 57(1): 1–15.
<http://dx.doi.org/10.1080/15387216.2016.1183221>.

Azatoryun.am. 2013. “Հայաստանն Իր Գործունեությունը Կառուցում Է «Եւ-Եւ» – Ի Սկզբունքի Վրա.” *Azatoryun*.

Balzacq, Thierr Y. 2005. “The Three Faces of Securitization : Political Agency , Audience and Context.” *European Journal of International Relations* 11(2): 171–201.

Balzacq, Thierry. 2011. *Routledge Taylor & Francis Securitization Theory: How Security Problems Emerge and Dissolve*.

- Bourbeau, Philippe. 2014. "Moving Forward Together: Logics of the Securitisation Process." *Journal of International Studies* 43(1): 187–206.
- Bourbeau, Philippe, and Juha A Vuori. 2015. "Critical Studies on Security Security , Resilience and Desecuritization : Multidirectional Moves and Dynamics." *Critical Studies on Security* 3(3): 253–68.
<http://dx.doi.org/10.1080/21624887.2015.1111095>.
- Buzan Barry, Waever Ole, Jaap de Wilde. 1998. *Security: A New Framework for Analysis*. Lynne Rienner Publishers.
- Capoccia, Giovanni, and R Daniel Kelemen. 2007. "Institutionalism Theory , Narrative , and Counterfactuals." *World Politics* 59(3): 341–69.
- CRRC Barometer. 2015. *CRRC Barometer Survey*.
<https://www.crrc.am/caucasusbarometer/documentation?lang=en>.
- Entman, Robert M. 2003. "Cascading Activation : Contesting the White House ВТ™ S Frame After 9 / 11." *Political Communication* 4609(July).
- Fairclough, Isabella, Fairclough, Norman. 2012. "Political Discourse Analysis." : 1–263.
- Fairclough, Norman. 1989. *Language and Power*. Longman Group UK Limited.
- Harley, Bill, and Nelson Philips. 2004. "Symposium : Discourse and Content Analysis." *Qualitative Methods*: 19–22.
- Koesel, Karrie J, and Valerie J Bunce. 2012. "Putin , Popular Protests , and Political Trajectories in Russia : A Comparative Perspective." *Post-Soviet Affairs* 28:24(August): 403–23.
- Laenen, Ria. 2012. "Russia's 'Vital and Exclusive' National Interests in the Near Abroad." In *Russia and Its Near Neighbours, Identity, Interests and Foreign Policy*, ed. Roger E. Kanet Raquel Freire, Maria. Palgrave Macmillan, 17–34.
- Lragir.am. 2016. "ՀՀ ՊՆ Տեղեկանքը Հայ-Ռուսական Միավորված ՀՕՊ Համակարգի Վերաբերյալ." *Lragir.am*.
<http://www.lragir.am/index/arm/0/politics/view/134102>.
- Ранорамa.am. 2013. "Отношения Армении С ЕС Продолжатся, Мир Не Рухнул. Заявление Александра Маркарова." *Ранорамa.am*.
<http://www.panorama.am/ru/news/2013/09/04/markarov-minasyan/451121>
- Sasse, Gwendolyn. 2013. "Linkages and the Promotion of Democracy: The EU's Eastern Neighbourhood." *Democratization* 20(4): 553–91.
<http://www.tandfonline.com/doi/abs/10.1080/13510347.2012.659014>.
- Ter-Matevosyan, Vahram, Drnoian Anna, and Mkrtychyan Narek. 2017. "Armenia

in the Eurasian Economic Union : Reasons for Joining and Its Consequences
Eurasian Geography and Economics 7216(August): 1–20.
<http://dx.doi.org/10.1080/15387216.2017.1360193>.

Wilkinson, Claire. 2007. “The Copenhagen School on Tour in Kyrgyzstan: Is Securitization Theory Useable Outside Europe?” *Security Dialogue* 38(1): 5–25.

Аргументы недели. 2013. “Армения Выйдет из ОДКБ?” *Аргументы недели*.

Арешев, Андрей. 2013. “Согласованные Документы Вовсе Не Исключают Сотрудничества Еревана Со Странами Европейского Союза.”
Panorama.am.
<http://www.panorama.am/ru/news/2013/09/04/andrey-areshev/451206>.

Борисов, Александр. 2013. “Ереван Меняет Ориентацию С Европейской На Евразийскую.” *Санкт-Петербургские ведомости*.

Искандарян, Александр. 2013. “В Дилемме «Таможенный Союз Или ЕС» Армения Отдала Предпочтение ОДКБ. Власти Армении Учли Главный Фактор – Безопасность.” *Panorama.am*.
<http://www.panorama.am/ru/news/2013/09/04/iskandaryan/451015>.

Колеров, Модест. 2012. “Модест Колеров: Армения Формулирует Новую Политику В Отношении России.” *Регнум*.
<https://regnum.ru/news/polit/1588587.html>.

— — —. 2013a. “АРМЕНИЯ ИДЁТ В ТАМОЖЕННЫЙ СОЮЗ: ЦЕНА СЛОВ: России Стоит Внимательно Понаблюдать За Тем, Что Последует За Декларациями.” *REX*. <http://www.iarex.ru/ARTICLES/40703.HTML> .

— — —. 2013b. “ Я Не Удивлюсь, если в Армении Будет Поставлен Вопрос О Выводе Российской базы.” *REX*.
<http://www.iarex.ru/interviews/38859.html>.

— — —. 2016a. “Армения Первая В Мире Страна, Получившая От РФ «Искандер» - Модест Колеров.” *Tert.am*.
<http://www.tert.am/ru/news/2016/09/21/kolero/2140427>.

— — —. 2016b. “Рогозин И Медведев Уничтожили Все Усилия Русской Дипломатии Последних 25 Лет.” *1in.am*. <http://ru.1in.am/1148511.html>.

Коммерсант. 2012. “«Таможенный Союз Не Имеет Для Нас Смысла.»” *Коммерсант*.

Манучарян, Ашот. 2013. “Ашот Манучарян Советует В Отношениях С Россией И Евросоюзом Руководствоваться Принципом –и-И.”
Armenpress News Agency (Russian).

Маркаров, Александр. 2013. “У Европы Нет Механизмов, Чтобы Быть

- Гарантом Безопасности На Кавказе: Политолог.” *Armenpress News Agency (Russian)*.
- — —. 2016. “Александр Маркаров: Азербайджан Пытается Установить Контроль Над Территорией НКР, И В Этом Вопросе Баку Помогает Турция.” *Panorama.am/novostnik.ru*.
- Маркедонов, Сергей. 2009. “С.Маркедонов: Пражский ‘предбанник’ Европы. Европеизация Постсоветского Пространства Получает Новый Импульс.” *ЦентрАзия*.
<http://www.centrasia.ru/newsA.php?st=1241602680>.
- — —. 2013. “Поставки Российского Оружия Баку Спровоцировали В Армии Антироссийские Настроения.” «*Ноев Ковчег*».
- Марукян, Едмон. 2016. “Эдмон Марукян: Наши Требования К России Выше, Чем К Израилю.” *Аравот*. <http://edmonmarukyan.com/3071/>.
- Налбандян, Едуард. 2016. “Российско-Армянские Отношения Носят Сознический Характер – Глава МИД Армении.” *All News (Edinaya novostnaya lenta)*.
- Путин, Владимир. 2012. “Новый Интеграционный Проект Для Евразии — Будущее, Которое Рождается Сегодня.” *Известия*.
- Рокс, Юрий. 2016а. “Армения Может Задать Партнером Неудобные Вопросы.” *Независимая Газета*.
- — —. 2016б. “В Армении Ждут Сергея Лаврова.” *Независимая Газета*.
- Сафарян, Вазген. 2013. “Вазген Сафарян Связывает Подъем Промышленности Армении С Интеграцией В Евразийский Экономический Союз.” *Armenpress News Agency (Russian)*.
- Смирнов, Дмитрий. 2013. “Путин Убедил Армян Вступить В Таможенный Союз.” *Комсомольская правда*.
- Тарасов, Станислав. 2013. “ЕРЕВАН ГОТОВИТСЯ СДАТЬ НАГОРНЫЙ КАРАБАХ АЗЕРБАЙДЖАНУ.” *REX*. <http://www.iarex.ru/articles/39114.html>.
- — —. 2016. “Своими Провокациями Азербайджан Не Достиг Своих Целей.” *Armenpress News Agency (Russian)*.
- Шармазанов, Едуард. 2016а. “Решения О Входе В ОДКБ И ЕАЭС Были Приняты С Учетом Всех Плюсов И Минусов: Вице- Спикер НС Армении.” *Armenpress News Agency (Russian)*.
- — —. 2016б. “Членство Армении В ОДКБ Не Имеет Альтернативы.” *Интерфакс*.

- Աբրահամյան Հովիկ. 2016. “Լավ Կլինի, Որ Ռուսաստանը Ձեռք Չվաճառի Ադրբեջանին, Բայց Դա Իրենք Են Որոշում. Հովիկ Աբրահամյան.” *news.am*.
<https://news.am/arm/news/321483.html>.
- Աճենյան Կարինե. 2016. “Ինչ է Խոսել Սերժ Սարգսյանը ՀՀԿ-ի Հետ Փակ Հանդիպմանը.” *henaran.am*. <http://henaran.am/194202.html>.
- Առավոտ. 2013. “«Ինչպես Իշխանությունը Սիրում Են Ասել` Գնդակը Եվրոպացիների Դաշտում Է».” Առավոտ.
- Արեշև Անդրեյ. 2016. “Ապրիլյան Դիմակայությունը ԼՂՀ Իրավիճակն Ապակայունացնելու Լուրջ Փորձ Էր.” *Tert.am*.
<http://www.tert.am/am/news/2016/04/19/andrey-areshev/1993805>.
- Բարութանյան Հայկ. 2013. “Պետք է Ընտրել և՛-և՛-ի Տարբերակ.” Հայաստանի Հանրապետություն.
- Բարսեղյան Լուսինե. 2013. “ՀՀԿ-Ն Փորձում Է Տակից Դուրս Գալ.” Հայկական ժամանակ.
- Բեքարյան Կարեն. 2013. “Հակադրել Պետք Չէ` Առկա Եվրամիությունն Ու Նախատեսվող Եվրասիական Միությունը.” Հայաստանի Հանրապետություն.
- Գաբրիելյան Էմմա. 2013a. “Մոսկվայից Արձագանքները Ավելի Ու Ավելի Ջղաձիգ Են Դառնում.” Առավոտ.
- — —. 2013b. “Ռուսական Քարոզչամեքենային «արջի Ծառայություններ» Պետք Չեն.” Առավոտ.
- — —. 2016. “«Անակնկալ» Պատերազմ Ու «խաղաղասեր» Պուտինը.” Առավոտ.
- Գրիգորյան Նարեկ. 2013. “ՀՀԿ-Ն Մեղադրանքի Սլաքն Ուղղում Է ԵՄ-Ի՞ Կողմը.” Առավոտ.
- Զատուլին Կոնստանտին. 2017. “Զատուլին. Ապրիլյան Պատերազմը Զի Կրկնվի.” Օրակարգ լրատվական ծառայություն.
<http://news.1tv.am/hy/2017/04/03/Զատուլին-Ապրիլյան-պատերազմը-չի-կրկնվի/55598>.
- Զոհրաբյան Նաիրա. 2016. “Նաիրա Զոհրաբյան. Ընկերներին Փողի Հետ Չեն Փոխանակում.” Առավոտ. <http://www.aravot.am/2016/06/02/699857/>.
- ժամանակ Հայկական. 2013. “«Ձեռի Հետ» Մի Քիչ Էլ Բարեկամություն.” Հայկական ժամանակ.
- Իսկանդարյան Ալեքսանդր. 2013. “«Ռուսաստանի Համար Հայաստանն Անփոխարինելի Է Քաղաքական Շահերն Այդ Են Պահանջում».” Հայաստանի Հանրապետություն.
- — —. 2016. “Նման Կերպ Պատերազմներ Չեն Սկսում.” Առավոտ.

<http://www.aravot.am/2016/04/04/674974/>.

Իրավունք. 2013a. “Եթե Ադրբեջանը Պատերազմ Սկսի, Ռուսական «Ռազմաբազան Կմտնի Զինված Հակամարտության Մեջ».” Իրավունք.

— — —. 2013b. “Եվրախնտեգրման Քարոզիչները Անցել Են Բացահայտ Ստերի.” Իրավունք.

— — —. 2013c. “Հայաստանը Նախընտրեց Մաքսային Ե՛ Եվրասիական Միություններ.” Իրավունք.

— — —. 2016. “«Եռօրյա Պատերազմի» Դասերը. Արևմտյան Լռությունն Էլ Ալիկի Կամար «դաբրո» Դարձավ.” Իրավունք.

ՀակոբյանԹաթուլ. 2016. “Ապրիլյան 4-Օրյա Պատերազմ. Արդյունքներ, Դասեր, Առասպելներ.” *Analyticon*. <http://theanalyticon.com/?p=7820>.

Հայկական ժամանակ. 2016. “Երեք Ուղերձ Հայաստանից.” Հայկական ժամանակ.

Հանրապետություն Հայաստանի. 2016. “Բավականին Թանկ Գին: Ռուսալեզու Մամուլի Անրադարձը Արցախյան Իրադարձություններին.” Հայաստանի Հանրապետություն.

ՀարությունյանԱրայիկ. 2013. “Հերթական Ճնշու՞մ Էր ՌԴ-Ի Կողմից».” Հայկական ժամանակ.

Սեդվեդև Դմիտրի. 2016. “Սեդվեդևը Չի Բացառել «թուրքական Գործոնը» Դարաբաղի Իրավիճակում.” *Sputnik Armenia*. <https://m.armeniasputnik.am/russia/20160409/2893269.html>.

ՇահնազարյանՂավիթ. 2013. “«Մեզ Չեն Խնդրում Ստորագրել ԵՄ Ասոցացման Համաձայնագրերը, Մեզ Առաջարկում Են».” Առավոտ.

ՌոզոզինԴմիտրի. 2016. “Ռոզոզինին Ղուր Չի Եկել Հայաստանի Արձագանքը.” Այսօր. <http://www.aysor.am/am/news/2016/04/12/դմիտրի-ռոզոզին/1070404>.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն. 2015. Հայաստանի Հանրապետության. <http://www.parliament.am/parliament.php?id=constitution>.

ՍարգսյանՍերժ. 2013. “ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի Խոսքը ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինի Հետ Բանակցությունների Արդյունքների Վերաբերյալ Մամուլ Ասուլիսի Ժամանակ.” ՀՀ նախագահի մամուլի ասուլիսներ. <http://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-press-conference-working-visit-to-Russian-Federation/> .

— — —. 2016. “Սերժ Սարգսյան. «Հայ ժողովուրդը Ցավ Է Զգում, Երբ Ռուսաստանը Զենք Է Վաճառում Ադրբեջանին».” *A1+*. <http://www.a1plus.am/1446243.html>.

ՍարգսյանՎիգեն. 2013. “Ասոցացման Համաձայնագրի Նախաստորագրելու Խնդիրը

Մնում է Հայաստանի Օրակարգում.” Հայաստանի Հանրապետություն.

ՍաֆարյանՍտյոպա. 2013. “«ՄՄ-Ին Միանալու Որոշման Հարցում ՀՀ Իշխանություններին Շանտաժ Են Արել».” Առավոտ.

ՔոչարյանՇավարշ. 2013. “Հայաստանի Ընտրությունը Ի Վնաս Որևէ Մեկի Չէ.” Հայաստանի Հանրապետություն.

ՖարմանյանՍամվել. 2016. “«Հայաստան-Ռուսաստան Հարաբերություններում Պետք է Բացառել Մուկուկատու Խաղալը». Ս. Ֆարմանյան.” *Armtimes/Հայկական ժամանակ*. <http://armtimes.com/hy/article/91236>.

Հավելված I

Հարցազրույցը վարվել է հետևյալ փորձագետների հետ

7.07.2017	Ստյոպա Սաֆարյան	«Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտ», հիմնադիր-նախագահ
12.07.2017	Ստեփան Գրիգորյան	Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցության

		վերլուծական կենտրոնի խորհրդի նախագահ
21.07.2017	Ստեփան Դանիելյան	«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ ղեկավար, քաղաքագետ
28.07.2017	Ալեքսանդր Մարկարով	ԱՊՀ երկրների ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն, քաղաքագետ
4.08.2017	Ռիչարդ Գիրագոսյան	Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի ղեկավար
10.08.2017	Մանվել Սարգսյան	<i>Ռազմավարական և ազգային հետազոտությունների</i> հայկական կենտրոնի տնօրեն
14.08.2017	Բենյամին Պողոսյան	ՀՀ ՊՆ Պաշտպանական Ազգային հետազոտական համալսարանի գիտության գծով պետի տեղակալ
15.08.2017	Արմեն Մինասյան	ՀՀ Նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Հարցաշար

- 1) Արդյո՞ք կանխատեսելի էր Հայաստանի անդամակցությունը Եվրասիական Տնտեսական Միությանը (Մաքսային Միություն) մինչ 2013 սեպտեմբերի 3-ի որոշ (նախօրոք ազդանշաններ):
- 2) Ինչու՞ Հայաստանը անդամակցեց ԵՏՄ-ին և արդյո՞ք Հայաստանը ստացավ տնտեսական ու անվտանգային բավարար երաշխիքներ:
- 3) Ձեր կազմակերպությունը իրականացրե՞լ է հետազոտություն ԵՏՄ անդամակցության օգտավետության վերաբերյալ:
- 4) Ինչպե՞ս կգնահատեք ՀՀ իշխանության հանրությանը ուղղված բացատրական գործողությունները ԵՏՄ անդամակցության վերաբերյալ:
- 5) Որո՞նք էին Ռուսական փորձագիտական շրջանների բացատրությունները թե ինչու Հայաստանը միացավ ԵՏՄ-ին:

- 6) Ինչպիսի՞ն էր հանրային տրամադրվածությունը Ռուսաստանի և ՀԱՊԿ նկատմամբ Ապրիլյան պատերազմի ընթացքում և անմիջապես հետո:
- 7) Ինչպիսի՞ն էր ՀՀ իշխանության արձագանքը Ռուսաստանի և ՀԱՊԿ անդամ երկրների դիրքորոշման նկատմամբ «Ապրիլյան Պատերազմի» ընթացքում և հետո:
- 8) Որո՞նք էին ՀՀ իշխանություն գործողությունները (messaging) ուղղված ներքին լսարանին «Ապրիլյան Պատերազմի» ընթացքում:
- 9) Որո՞նք էին ՀՀ իշխանություն գործողությունները (messaging) ուղղված ներքին լսարանին «Ապրիլյան Պատերազմի» ընթացքում և հետո (regarding Russia and CSTO):
- 10) Որո՞նք էին Ռուսաստանի պաշտոնական անձանց մեկնաբանությունը Ռուսաստանի դիրքորոշման վերաբերյալ:
- 11) Ինչպիսի՞ն էր ռուսական փորձագիտական շրջանակների բացատրությունը Ռուսաստանի դիրքորոշման վերաբերյալ «Ապրիլյան Պատերազմի» ընթացքում և հետո: